Adon. Rédaction
de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistingasse 4

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԴԱՄՕՒԼ

ԿԻՍԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԳՐԴ ՏԱՍՐԻ

1894

ԹԻՒ 10 ՅՈՒՆԻՍ 1

ԽՄԲԱԳԻՐ-ՏՊՕՐԷՆ
Ա. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՐՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես	
Քահանայի Խնդիր	297	ԽՄԲ.
Բարոյական Խնդիր	305	Ն. Յ. ԳԱՍԱՊԵԱՆ
Իմ Մանկական Յիշատակներս	309	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Գիշեր	313	Մ. ՎԱՐՊԵՏԵԱՆ
Գրագետ մ'ու Իր Լեզուն	314	ԳԱՍՊԱՐ Պ. ՆԵՄՑԷ
Կարի Վրայ Կարեւոր Գիտելիք	317	ՏՕՔԹ. ՓԱՇԱԵԱՆ
Մանկական Պարտէզ	319	Կ. Վ. ՊԱԼԱՊԱՆ
Հաղորդուող Աղջկունք	323	Ա. ՇԱՔԼԵԱՆ
Որբանոցի Տարեդարձը	325	Վ.
Լրաբեր	328	ԽՄԲ.

Ա. ՄԱՄԼՈՑ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի Կ. ՊՕԼԻՍ՝ առ Մ՚ա — Կ՚ենդրուն սոյն առատանուամբ՝ կեդրոնական վարժարանի վրայ մեզ ուղղած յօդուածի հեղինակին՝ որ յատուկ նամակաւ հաղորդէ իր քուն անունն ի գիտութիւն խմբագրութեանս միայն, որպէս զի իր յօդուածը հրատարակուի։

ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԻԵՐԷՆԷ Ի ՀԱՅ *յօրինեց Վ. Յ. ՅԱԿՈՐԵԱՆ։* Ամբողջ գործը փոխանակ 35ի որ խոստացուած էր՝ 45-47 թերթ պիտի լինի։ Բաժանորդագինն է պարզ կազմ 30 դրշ. լաթ. 35, կիսակաշի 40։ Օտար երկրաց համար 7 և 8 ֆր. լրանալէ յետոյ 40, 45 և 50 փոստին ծախքը գնողին վրայ լինելով։ Փափաքողք պարտին դիմել հրատարակչին, Զ. Թորոսեանի Պօլիս, Պահճէ-Գարու, Նոր-բոստին դէմ, թիւ 4, ուր է միակ կեդրոնատեղին։ Ա. Թերթն ձրի իբր նմուշ կը տրուի։ Հրատարակուած է 38րդ թերթն։ Բաժանորդագրութիւնն ի մայ կը փակուի երբ 40րդ թերթը հրատարակուի։

ՅԻՇԱՏԱԿԱՑ ԾԱՂԻԿՆԵՐ. Փունջ առաջին. ՌՈՒԲԷՆ ՈՐԲԷՐԵԱՆ։ Կեդրոնատեղի Յակոբ Էֆ. Խալրանեան գրավաճառ և ջրավաճառ կ. Պօլիս Կէտիկ — փաշայ, գին 5 պահեկան. գաւառներու յանձնարարութեանց փոխան նամակագրուի ևս կընդունուի։ Փունջ երկրորդ ընդ հրատարակելի։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ο ΠΟΛΕΜΟΣ

(Ο ΠΟΛΕΜΟΣ)

ԵԿԷՔ ԱՍԵՆՔԴ ԱԼ ԱՅՑԵԼԵԼ

ՄԵՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՆԵՐԸ

ԿՐԿՆԱԿԻ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ՄԵՐ Ի ՎԱՃԱՌ ԳՐԱԾ ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԵՆԷ

Ի

ԳԻՆԵՐՈՒ ԱՆՀԱՒԱՏԱԼԻ

ԱՅԼ ՁԵՄԱՐԻՑ ԱՅԱՆՈՒԹԵՆԷՆ

Ա· Ա· ԳՕՆՏՈՒԼԻՄ ԵԻ ԸՆԿ·



ՄԹՐՆՑ· ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ

Ն. Ժ. ԲԱՔԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ·

Ֆրէյ· Ք–Ը 91 — Շիլֆէյ–ոյ 34

Գ.ՆՈՒԹ, ՓԷՅԵՐ–ԱՒԸ 32/34

Մարդ կրնայ ամեն տեսակ կարի մեքենաներու տէր լլլնել, ՄԻՄԻՆՑՆ չաքաթական 1/2 մէջիա վճարելով։

Կօշկակարներու, դերձակներու և ճերմակեղէնի կարուհիներու համար՝ կարի մեքենաներու նոր ֆէյնէրը ամենէ տոկուն, ամենէ արագ, ամենէ դիւրին և առանց ձայնի է։

Մեր վաճառատանէն ծախուած ամէն մեքենայ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ է։

Մեր ամէն յաճախորդներուն ՋՐԿ դասատուութիւնն և մեքենաներու նորոգութիւնն։

Ամէն տեսակ մեքենաներու նորոգութիւն։

Ասեղ, դերձան, իւղ չափաւոր գիներով։

Յամոզուելու համար ԱՆԴԱՄ ՄԸ ՄԻԱՑՆ այցելել պէտք է։

ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻՋՄԻՐի համար — Ապժէքին կէսը կանխիկ և միւս կէսը երեք ամսէն։

ԻՋՄԻՐԼԻ ԴՈՒՐՍ — կանխիկ։

Ամեն անոնք կ'փափաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիներով՝ կազմեալ գրքեր ունենալ թող դիմեն, 1857ի իվեր հաստատեալ, Իվանկէլիքօն Յունաց դպրոցին անցքին մէջ թիւ 8

առ **ԱՓԱՆԱՍ ԱՆԿԷԼԻՏԻՍ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ՉԱՐԵՀ ՇՆՈՐՀԱԻՈՐ

Հայոց Ընդ. Բէյլէրպէ ճադեսէ

Ամեն տեսակ դեղերու մեծ խնամք պատրաստութիւն

Ձափաւոր գիներ

Գաւառներէ եկած հիւանդներու ամեն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ գաւառները կը ղրկուին

Ս. ՍԻՎՐԻԱՐԵԱՆ ԻԵ ԸՆԿԷ

ԿԵՑԵ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մոյն համբաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին զանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն իմքրի ամէն հատարակութեանց համակրութիւն, այլ և իր բոլոր գաւառացին յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քանի դնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ գոհ մնացած և ասոր վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ՝ ինչպէս ցարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիատեան վաճառատունն պատրաստ է մնեւնոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառացոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրով կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով վարձել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիատեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտանուին՝

Ա.Ա. – Ե.Ր.Ի.Ի. Կ.Ո.Ղ.Ո.Վ.Կ. Ֆ.Ո.Ղ.Ո.Ց.Ն. Ժ.Ե.Ե. Ք.Ա.Ե.Ր. Խ.Ա.Ի. Ա.Ղ.Ի.Ն.

LIBRAIRIE FRANÇAISE & ANGLAISE

ԿԻՆ-ԼՈՒՆԻ, 0 ՊԵՆ-ՄԱՐՇԷՅ ԳԻՄԱՑ ՓՈՂՈՑ

Պատիւ ունիմ ծանուցանել քաղաքիս Հոյ ընթերցասէրներու թէ վերջերս ստացայ հետևեալ գրքերը՝

Ֆրէտրիք Մասօն — Դաքթէօճ է լէ Ճամ
Քէն ու Ըն Օլէր — Փրոմիս է Ռուսի
Ֆիկառօ Սալօն 1894 — Արմէ Ֆիւս
Ցանիվ Ֆիկառօ Սալօնի 1894
Բ. Պուրժէ — Քազմնթօլիթ (Դէ 1 Ա.Ի.Ա.)
Նոր տպագրութիւն պատկերազարդ

ԿԱՏՈՂԻՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՏԻՕԵՆԻՍ

GRANDS MAGASINS DIOGENIS

Կ՚ափսէնք քաղքիս Պատ. Հասարակութեան այցելել

անգամ մը մեր

ՏԱՐՕՐԵՆԱԿ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍԸ

որ ՝ի ԳՆԱՅ ՄԻՆՉ ՇԱԲԱԹ պիտի տեւէ։

Հետեւաբար կը խրատենք մեր Արդոյ Յաճախորդներ-
ուն որ կարելի եղածին չափ շտապեն, քանի որ հազուա-
գիւտ է այս առիթը

Արդէն ամենուն յայտնի է ՏԻՕԵՆԻՍ ՎԱՃԱՌԱՏԱՆ
նոր դրութիւնը, այն է ամենաէժան չահերու ընդհանրով
մեծ քանակութեամբ ապառնել։ Եւ այս դրութիւնը շա-
րունակ յառաջ տանիլ կարողանալուն ԳԱՂՏՆԻՔԸ իւր
ինչ ըլլ տեսակ ապրանք ունենալուն մէջ կը կայանայ։

Հետեւաբար հաճեցէ՛ք անգամ մը այցելել մեր վա-
ճառատուներէն, և պիտի համոզուիք իսկոյն որ մեր ի
վաճառս դրած ապրանքները լաւ են և

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱԺԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԾԴ. ՏԱՐԻ

ԹԻՒ 10 1 ՅՈՒՆԻՍ 1894

ՔԱՀԱՆԱՅԻ ԽՈՒՐՐ

Եկեղեցի մ՚առանց քահանայի և քահանայ առանց հոգևոր կոչման և ուսման մեզ հայոց երբեմն տարօրինակ երևոյթ մը կ՚թուի, երևոյթ մ՚որ, թէև նոր չէ, թէև շատ տարիներէ ի վեր բնական վիճակ մ՚է դարձած, սակայն իրև անբնական մի բան մերթ ընդ մերթ մեզ զարմանք կ՚պատճառէ, ծանր դանգատներու տեղի կ՚տայ, արժանաւոր հոգևորականներ ստեղծելու փափաքը կը զրգռէ, այս մասնաւ նոր խորհուրդներ և ծրագիրներ կազմելու եռանդը կ՚բորբոքէ, և այդ փափաքն ու եռանդը պահ մը տևելէ ետև՝ կ՚մարին, խորհուրդ ու ծրագիրը անդորձադրելի կ՚մնան և արժանաւոր քահանայի խընդիրն իր նախկին վիճակին մէջ թաղուած կ՚մնայ, մինչև

որ նոր առիթ մը ծագի, նոր վտիտք մը դրդուի վերադին ապարդիւն մնալու պայմանաւ։

Եւ ի՞նչու։

Վասն զի եթէ եկեղեցին առանց քահանայի և քահանան առանց կոչման ցաւալի երևոյթ մ՚է, ոչ նուազ ողբալի իրողութիւն մ՚է առանց ժողովրդեան եկեղեցի մը։ Եւ ուր որ ժողովուրդ չկայ, չկայ և եկեղեցի, թէև տաճարներն ու խորաններ կանգուն մնան, չկայ հաւատացելոց հօտ մը, հետևապէս և չկրնար լինիլ քահանայ՝ իր կոչման և պաշտաման արժանի։ Եթէ եկեղեցւոյ կեդանի աղբիւրն ժողովրդեան հաւատն է, քրիստոնէական վարդապետութեան վրայ հիմնուած, այդ աղբիւրէն պիտի ծագին նաև նոյն եկեղեցւոյն սպասաւորող և կենայ բանը քարոզող հոգևորականներն։ Երբ աղբիւրն պղտոր է, երբ աղբիւրը ցամքած է, անհնթեթև կ՚թուի մեզ պահանջել որ հաւատոյ և ճշմարտութեան չնորհներն զուտ և կենդանարար լինին, անհնար է պահանջել որ իր կրօնական պարտաւորութեանց անդէտ կամ անտարբեր հօտ մը զօրէ ընարել ուսեալ, բանիբուն, անձնուէր և արթուն հովիւներ և իր հոգւոյն փրկութեան հոգն անոնց յանձնէ։

Բայց թէ ի՞նչու համար հօտը տգէտ կամ անտարբեր է, այնպիսի խնդիր մ՚է որ մեզ կրնայ շատ հեռու՝ կրօնական և պատմական շրջուձներու փափուկ նկատողութեանց տանիլ, ուսկի՝ կ՚բաւէ միայն ըսել առ այժմ, որ եթէ արժանաւոր քահանաներու սով կայ մեր մէջ, եթէ մեծ մասամբ անուս երէցներ կ՚թափառին դիւղ ու քաղաք և ժողովրդեան հոգևոր պիտոյքը դոհ ընելու անբաւական են, եթէ ստէպ լոկ չահու ակնկալութեամբ և պաշտպանութեամբ Մուրբ Գրոց և եկեղեցական կանոնաց անհմուտ ընծայացուներ քահանայական կարգ կ՚ընդունին, և աւելի տգէտ և երբեմն կաշառակեր եպիսկոպոսներու ձեռօք կ՚ձեռնադրուին, առաջին մեղաւորն քահանան չէ, եպիսկոպոսը չէ, այլ ժողովուրդն է, որ կամ աղգակցութենէ, կամ տգիտութենէ և կամ անտարբերութենէ չարժած՝ ընծայացուն արժանի կ՚հռչակէ հո-

գևոր կոչման, անոր ձեռքն վկայագիր կ'տայ և գինք հովուելու կ'կոչէ։

Եւ միթէ մեղաւոր է և ժողովուրդն, եթէ իր ընտրութիւններն կ'համապատասխանեն իր հոգեկան, մտային և նիւթական վիճակի պայմաններուն, եթէ անկարող է գնահատել արժանաւորներն, և պատրաստ կ'գտնուի ըստէպ չոյել և պատուել անարժաններն, եթէ թոյլ իր կրօնական զգացմանց մէջ՝ մի և նոյն չափով կ'դատէ թէ ճշմարիտ ու անձնադիր հովիւն և թէ անչահ և չահամոլ քահանան, և եթէ վերջապէս իր եկեղեցականը կ'նկատէ իրրև գործի մ'որ կենաց հանդիսաւոր պարագայից և ղանազան ընտանեկան ձեռակերպութեանց համար կարեւոր է։

Եւ միթէ ձեռնադրող եպիսկոպոսն պատասխանատու չէ՞ այս մասին։ Է՛հ, թերևս. միայն հարկ է ի նկատի առնուլ որ մի և նոյն նկատումներով կ'ձեռնադրուին և մեր եպիսկոպոսաց մեծ մասն, և եթէ տեղ տեղ թէ՛ առաջնորդական և թէ վանական պաշտօններու մէջ՝ կ'երևին այնպիսիներ որ իրենց սուրբ կարգին և պաշտօնին պահանջումները խղճի մտօք, իմաստութեամբ և անթափուր վարուք կ'կատարեն, եթէ եկեղեցւոյ օրինաց հմուտ՝ ամեն ապօրէն դործողութենէ կ'զգուշանան և՝ Աւետարանի ճշմարիտ աշակերտներ՝ կ'ջանան սրբութեամբ կատարել իրենց հովուական ծանր պաշտօնն ու պարտաւորութիւնները՝ ի սպառ մերժելով սուրբ սեղանի սպասաւորութեան կոչել՝ ամեն ժողովրդային տգիտական թախանձանաց հակառակ, ապիկար, անկիրթ և անփորձ անձեր, այդպիսիներ հազուագիւտ են, և ստէպ դառնապէս այլ անարատունչ կ'կրեն հալածանք ու զրպարտութիւններ իրենց անկեղծութեան, արդարասիրութեան, եկեղեցական կարգապահութեան համար, ոչ միայն աշխարհական լուսամիտ կարծուած դասէն, այլ և նոյն իսկ իրենց պաշտօնակիցներուն կողմէն։

Ուրեմն ընտիր քահանաներ և ընտրելագոյն հովիւներ ստեղծելու համար հարկ է նախ վերակազմել եկեղեցին,

չէ թէ յորդորներ և քարոզներ կարդալով, այլ ճշմարիտ հաւատ և լոյս սիրելով ժողովրդեան մէջ, այլ կազմելով այնպիսի հիմնարկութիւններ որմէ ծագին, չէ թէ թեթեւամիտ դիտուններ, աչխարհասէր ընծայացուներ և վարիսեցիներ, այլ մարդկութեան սիրով վառ՝ բարւոյն սիրահար, բարոյական զգացմանց տիպար՝ եկեղեցական-ներ՝ որ միաւք համարին իրենց հոգւոր հօտին հոգեկան պիտոյքն հայթայթել, անոր հոգւոյն մէջ ներշնչել դո-ծունէութեան, եղբայրակցութեան, սիրոյ և հաւատար-մութեան ղգացմունքն և իրենց առաքելութեան պաշ-տօնն անթերի կատարել։

* * *

Ահա այս օրերս վերատին կ'յուղուի քահանայի խըն-դիրն և շատ հաւանական է որ առանց իրական հետևու-թիւն մը թողու, պիտի ծնայ անշոյժ և ապարդիւն։ Աչ-քովի Մարտի համարին մէջ Աբդէն Նէյեան է որ իր քարո-զովը աղաղակ կ'բառնայ այս անգամ մեր քահանա-յից ապիկարութեան դէմ և կ'պահանջէ ուսեալ, ար-ժանաւոր և բանիբուն անձեր միայն հովուական պաշտօ-նի կոչել, և չէ թէ տգէտ, անուս և անարժան տիրայու-ներ։ Այս աղաղակն կովկասէն, ուր հայ թերթեր այս մա-սին բուռն վէճ մը կ'բանան, արձագանգը կ'գտնէ և մեր կողմերն, այնպէս որ դրեթէ ամեն օրագիր խոստո-վանելով հանդերձ թէ՝ գիւղական երէցներու տգիտու-թիւնն ու անճարակութիւնն առակաւոր է ընդհանրա-պէս, այս ողբալի վիճակին պատճառները կ'մի տանէն, և ոմանք ժողովրդեան տգիտութեան և կամակորութեան, այլք արժանաւոր ընծայացուներու պակասութեան, ու-րիշներ ձեռնադրող եպիսկոպոսներու անհոգութեան և շահադիտական ակնառութեան մէջ կ'գտնեն, իսկ մի քանին ալ եկեղեցական բարձրադոյն իշխանութեան թոյլ և կամակատար տրամադրութեանց մէջ։ Հապա դարմա՞նը։ Արչէն երէցի քարոզութեան նայելով՝ ժողո-

վրդեան լաւ քահանաներ տալու եկեան պայմանն է՝ ա-
մայացեալ վանքերն ուսման և դիտութեան մի մի վա-
ռարան դարձնել և հին հայրապետներու գործը վերա-
նորոգելով՝ գիւղական ժողովրդեան համար արժանաւոր
քահանաներ պատրաստել։

Աըչէն երէց, որ վ.Նհ. Հայրապետին ներշնչութեամբ
կ'խօսի, կ'ըսեն, հին վերք մը մատնանիշ ընելէ ետև իրա-
ւամբ՝ նոր դարման մը կ'ապսպրէ։ Նոր է արդարև դար-
մանի եղանակն, վասն զի ներկայ դարուս մէջ մի քանի
վանքեր տուած են մեզ մի քանի լաւ վարդապետներ և
մի չատ ունայնամիտ կրօնաւորներ, բայց չենք գիտեր
թէ ո՞ր վանքերէ եկած են բանիբուն քահանաներ։ Ելիէ
լաւ մը մտածենք հարիւրաւոր երէցներ, հազիւ հայաբնակ
քաղաքի ու գիւղի մէջ մի քանի տասնեակ՝ Ս. Գրոց հը-
մուտ, պարկեշտ և պատուաճանաչ քահանաներ պիտի
գտնենք, բոլորը ժողովրդային դպրոցներէ եկած՝ որ ան-
շուք և թշուառ կեանք մը կ'վարեն մի միայն կրօնի և
իրենց ժողովրդեան սիրոյն համար։

Արդ՝ միթէ դործադրելի՞ է Աըչէն երէցի առաջարկն,
միթէ հնա՞ր է վանական հաստատութիւններով դար-
մանել չարիքն։ Թերևս Աըչէն երէց դործադրութեան
միջոցները խորհած և վանատուններն հետզհետէ լուսա-
տուններ ընելու յատակագիծ մը յօրինած է անշուշտ։
Մեզ կ'մնայ և սրտէ յաջողութիւն մաղթել, դիտել տալով
միայն որ այդ առաջարկին մէջ ժամանակագրական սխալ
մը կայ, ժողովրդեան ծոցէն հետի, ժողովրդեան բարոյա-
կան պիտոյից անտեղեակ՝ չորս մու թ պատի մէջ կրթուող
քահանայապուն չէ կարող ժողովրդեան սրտին մօտ լինիլ
օգտակար դեր մը կատարել, թող լինի այդ վանականն ա-
ռաջին կարգի դիտուն, խորհրդատ ատտուածաբան և քա-
ջախօս տրամաբան, այլ պարտի նա ժողովրդային վար-
ժարանի մը մէջ աւետարանական ոգւով իր հօտին լու-
սաւորել, տարրական դիտելիօք իր միտքը կրթել և երբ
եկեղեցական պաշտօնին անկեղծ և ինքնայորդոր կո-
չում մ'ղտայ, այն ժամանակ կրնայ միայն ծառայել նիւե-

ղեցւոյ՝ մանկտով ծանր ու վշալից ասպարէզն՝ ազատ ա-
մեն անձնական նկատումներէ և մեծատուններու պաշտ-
պանութենէ՝ լոկ ժողովրդեան սիրայորդոր հրաւէրին
վրայ, և ըստ-ի եպիսկոպոսի մը ձեռնադրութեամբ՝ եւ
եթէ ժողովրդեան քահանաներն իրենց ընտիր վարքով
և սրբանուէր բնաւորութեամբ՝ մի և նոյն անկեղծու-
թեան, ճշմարտասիրութեան և օծութեան օրինակելի
տիպար ուղեցոյցները պարտին հանդիսանալ, այդ չնշա-
նակեր թէ ամենքն նոյն իմացական կարողութեան տէրը
կրնան և պարտին լինիլ, քանի որ ամենքն մի և նոյն հո-
տին դէտ կամ երէց չպիտի կարդուին, Ոմանք գիտա-
կան, այլք թեմական և շատեր վիճակային ժողովրդոց
հոգևոր պիտոյքը պիտի հայթայթեն և հետևապէս՝ ե-
թէ միշտ սրտով և հոգւով մեծարելի և համազօր, ան-
պատեհութիւն չլինիր եթէ համակութեամբ և մտաւորա-
կան զօրութեամբ աստիճանակից ընկերային Ուստի եկե-
ղեցական ձեռնհաս իշխանութիւնը պարտի յատուկ յա-
տուկ հօտերու վիճակին յարմար ուրոյն հովիւներ պատ-
րաստել, կրօնական կրթութիւնն ըստ այնմ ջամբել,
միշտ գնահատելով թէ վերին, թէ միջին և թէ ստորին
կարգի եկեղեցականներու արժանիքն և ծառայութիւն-
ները, պայման մ'որ այժմ բոլորովին անտես կ'առնուի և
դրեթէ միշտ եկեղեցական ասպարէզն վտառասիրին, շա-
համոլին համար պատուոյ և մեծութեան կայան մը դար-
ձած՝ արժանընտիր կրօնաւորներ այլևայլ անիրաւու-
թեանց ընորհիւ կ'տառապին և կ'յուսահատին եկեղեցա-
կան արժանապատուութեան անկման առջև։ Եւ ահա այս
է գլխաւոր պատճառն որ կրօնական կոչման ընդունակ
շատ բարեկիրթ, ընտիր հոգիները կ'խորշին այդ ասպարէ-
զէն, քալ գիտնալով որ չպիտի կարենան՝ յայանի և ան-
յայտ զեղծումներու հոսանքին դէմ դնել և եկեղեցւոյն
արժանապէս ծառայել։

Ա.յս բաւական չէ· գիւղացի և տեղ տեղ քաղաքացի
ժողովրդեան ազգասութեան ընորհիւ՝ ստեպ՝ ինչպէս վար-
ժապետի, նոյնպէս քահանայի չուրջն կուսակցական կը-

ուիւ մը կ'ծագի և յանկարծ բանսարկուն, անիրաւն յաղթութեան պսակը և ուղիղն ու արդարն դատապարտութեան վճիռը կ'ընդունի Յ-Ն-Հ-Ս իշխանութեան կողմէ։

Ահա այդ երկպառակութեան և տգիտութեան ոգին ամեն բանէ առաջ պարտ է բուժել, որպէսզի բուժին մեր միւս հոգևոր և մտային հիւանդութիւններն և ճշմարիտ եկեղեցականները ծնին՝ ժողովրդին կրթական կեդրոններէ, և ըստ արժանւոյն հովուութեան պաշտօն վարեն։ Եւ այդ բուժական պաշտօնն որո՞ւ կ'պատկանի եթէ ոչ կրօնական բարձր իշխանութեան։

* * *

Եւ մինչդեռ ամեն Հայ՝ որ եկեղեցւոյ քայքայեալ վիճակին տեղեակ՝ բարեշնորհ կրօնաւորներու պէտքը կ'զգայ և այդ պէտքը աւելի մեծ հեղինակութեամբ Ա. Հ. Ը. Ն. երեցը կ'չեշտէ, ցաւալի է որ ուրիշ Սրբազան մը, Սեդրակեան Սրբազանն, փոխանակ խնդրոյն լուծման նպաստող դիտողութիւններով հրապարակ իջնելու, անարժան և անվայել պատասխանով մը Ա. Հ. Ը. Ն. երեցին քարոզութիւնը կ'խծբծէ, այս այն կաթողիկոսը կ'նշանակէ, համալսարանական կրօնաւորներու կարևորութիւնը մեջ կ'բերէ, թէ նամական ակնարկութիւններով կարգ մը եպիսկոպոսներ կ'ամբաստանէ, և ապա կ'յայտարարէ թէ՝ Դժբախտ ընդունէ հեղինակն՝ Ա. Հ. Ը. Ն. երեցի քարոզի միջոցաւ՝ տգէտ ընծայացուները կ'ջատագովէ,—«...և կարծես թէ նպատակ ունի ասելու որ ինչպէս կարելի է տգէտները մերժել, եկեղեցւոյ հեռացնել, քանի որ ընտրողն ժողովուրդն է, և ըստ երևոյթին՝ կամենում է հոգևոր վարչութիւնն մի կերպ արդարացուցած լինիլ ազգի առաջ տգէտներու և անուսնելի ձեռնադրութիւնն թոյլ տալուն համար։»

Այս մեկնութիւնն որ քարոզին իմաստէն հեռի է կրակի վրայ թափուած եղի պէս խնդիրը կ'բորբոքէ և կերպ մը բանակռուի կ'վերածէ, այնպէս որ կռիւասու

Հայ օրագիրներէ չատեր կ'յարձակին բծախնդիր Սրբազանին վրայ և երկար յօդուածներով կ'ջանան ապացուցանել, որ Արշէն երէց տգէտ քահանաները կ'դատապարտէ, թէ ընդդիմախօս Սրբազանին բուն չարժառիթը նախանձն է, ատելութիւնն է, և թէ վեհ. Հայրապետն կ'մեղադրէ ոչ միայն տգէտներն այլ և գիւղացի ժողովուրդն որ այդ տգէտներուն վկայագիր կ'տայ։ Բայց կը յայտնէ նաև թէ՝ — «Տգէտ քահանան եթէ բարի և անբասիր վարքով ու դործնական ընտիր օրինակով քօղարկելով իւր տգիտութիւնն, տգիտութեամբ ինքնակար չէր լինէր ընտանեկան կենաց, խօսքին տեղ միայն բարի օրինակը քարոզելով։»

Այս բացատրութենէ կ'հետևի որ Արշէն երէցն լաւ ևս կ'ընտրէ միամիտ այլ բարի քահանան քան գիտուն այլ չարաննենգ կրօնաւորն, և իրաւունք ունի։ Միայն պէտք չէ մոռնալ որ, ներկայ պարագայից մէջ ուր լեցուն գլուխն, սուր միտքն ու համոզակեր լեզուն այնքան մեծ հրաշքներ կ'գործեն տգէտ ժողովրդեան վրայ, միամտութեան և տգիտութեան հետ բարի օրինակը չբաւէր, այլ ժողովրդեան կենաց գիտակցութիւնն, անոր հոգեկան ցաւերու դարմանն բերելու գիտութիւնն անհրաժեշտ կարևորութիւն ունին, և մինչև որ այդ կարևորութիւնն ղգալով՝ ձեռնհաս կրօնական իշխանութիւնն դործնական միջոցներով եկեղեցւոյ սպասաւորութեան անժամընտիր պաշտօնեաներ չպատրաստէ Արշէն երէցի քարոզներն, ինչպէս և օրագիրներու երկարապատում յօդուածներն պիտի մնան, ըստ առաջնոյն, իբրև օդային վիճաբանութիւն ու շաղակրատութիւն, թողլով և Հայ եկեղեցին թափուր և ամայի։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Շիքակո, 18 փետր. 1894

* * *

Մի քանի խօսք Ethical Culture Society ի մասին։ կարծեմ ի վեր ակնարկեցի թէ Տիար Մանկասարեան Շիքակոյի յիշեալ ընկերութեան առաջնորդն է և ամէն կիւրակէ առաւօտ կ'առաջնորդէ Կրէնա Ափրա Հասուլի մէջ, եւ կը յուսամ առելորդ չսլիսի լինի եթէ քանամ մի քանի տեղեկութիւն տալ Բարոյական ընկերութեան, այդ նորելուկ ազանդոյն կամ դաղափարական շարժման վերաբերմամբ։ Բարոյականի մշակման սատար հանդիսացող ընկերութիւնն որ ծանօթ է հասարակութեան (Ethical Culture Society) անուամբ, բարձրանպատակ և լուրջ դործի մը ձեռնարկած է՝ մտադրած լինելով մարդոց կեանքը և նկարագիրն միանդամայն չշափել։ Այս ազանդոյն հիմնական սկզբունքներն և ոչ մեկ կրօնէ առնուած են։ Քրիստոնէութիւնն բնաւ հետն գործ չունի և ոչ ալ որ և իցէ կերպիւ օժանդակած է իւր գոյութեան ի նպաստ։ Պատմութիւնն կը համարին իբր իրենց նախահայր Սոլթըր, քաջածանօթ ատենախօսն և բարոյական շարժման (éthical movement) մէջ բարձր դիրք գրաւող անձնաւորութեանց մին, կըսէ.— «Գիտենք թէ մարդկութեան բոլոր կրօնական հաւատալեաց միակ ծագումն նոյն իսկ ինքն (մարդկութիւն) առած է և ոչ թէ Աստուած կամ սատանան, ուստի պարտ ծագու առարկայ ընել՝ չէ այլ ինչ բայց եթէ մարդոց միտքն (սկզբնաւորիչն համայն կրօնից և հաւատալեաց) ծագրել։»

Բարոյականի մշակման ջատագով պարոնայք կը կարծեն թէ Աստուածազաւակաք աշխարհի ԱՆԾԱՆՕԹ ՋՕՐՈՒԹԻՒՆՆ ըմբռնելով իրը մի անձնաւորութեան և բնաւորութեան կարգի և օրինաց սերտ առնչութեան նկատմամբ այնքան խելօք ա կրակ դաղափար մը կազմած են, որ սկսած են խորհիլ թէ մինչև իսկ կրնան այդ անծանօթ Ջօրուժենէն հայցել լինչ որ իրենք չկարծեն ընել իրենց համար։

Սոքա յետ ընդհրկար և դժնդակ հետազօտութեանց, չը-

նորհիւ մասամբ իւիք իմաստասիրական քննադատութեանց ազդեցութեան և չափով մ՚ալ դրական դիտութեանց օժանդակութեամբ, ստիպեալ են, ըստ իւրեանց խօսից, Աստուածութեան անձնաւորութիւնն նկատել իբր մի խնդիր կամ հարց անլոյծ և դեռևս քննութեան կարօտ, իսկ աղօթքն համարել իբր մի անօգուտ չռայլումն մարդկային կենսական ղօրութեանն։

Սոլթըը այնպէս կը նկատէ թէ մենք Աստուածապաշտքս բընաւ երբէք իրաւունք չունինք անձնաւորութիւն բառն յարմարցնել և կամ գործածել բանի մը որ փորձառութեան սահմանէ դուրս կիյնայ, սակայն ներելի կը հաճի համարել թէ սոսկ բացատրութեան համար փոխաբերաբար գործածուի։

Այնպէս կը հաւատան թէ անտեսանելի և անծանօթ Ձօրութիւն մի կայ որ է պատճառ կենաց և կեցուցիչ, սակայն մարդկային լեզուաւ զնա բացատրելու համար պատշաճագոյն բառն անգտանելի կը կարծեն, այսու հանդերձ կ՚ընդունին թէ նա է լոյս անմերձենալի և անհասկանալի։ Սոցա տեսակէտին և կամ ըստ իւրեանց դաւանութեան, լոյսին ակնածանք և միանգամայն յարգանք մ՚է առ անծանօթ Ձօրութիւնն։ Իսկ անխոհեմին մի պաշտամունք։

Կարելի է՝ կ՚ըսեն մեր ընկեր արարածոց աղօթել կամ լաւ ևս խնդրել այս կամ այն պիտոյքն, սակայն աղօթել Անծանօթին Աստուծոյ՝ երկու չարիք կրնայ յառաջ բերել, նախ — անվստահութիւն անծանօթ Ձօրութեան մեզ բարերօրելու մասին ոյց տուած յօժարակամութեան։ Սոյն բարիք գործելու հանգամանաց ներքև նա մեզ յայտնուած է, և չարունակ կը բարերարէ ինք աղօթենք կամ ոչ, երկրորդ չարիքն է սա, որ — յառաջ կը բերէ անյուսութիւն մեր անձնական կարողութեան վերայ գործելու անձանձիր իբր մեծագոյն պատճառներ, և այն բարիքներն զորս Անծանօթ Աստուծմէն կը հայցենք, մեք մեր իսկ աշխատութեամբ կրնանք արտադրել առանց ուրիշի օգնութեան դիմելու բազկատարած։

Եւ որովհետև հին կրօնք չեն ընդունիր զայս համարձակաբար, հարկադրեալ կը համարինք զմեզ, կըսէ բարոյախօսն Սոլթըը, թողուլ իրենց ընկերակցութիւնն և ժամանակի մը համար դէմ հրաժեշտ կարդալ միմեանց։ Ազատական Քրիսթանէութիւն և Ռեֆեկտէեալ Հրեից գործոց չատերուն վերայ համակրանօք կը նային, որովհետև սոքա վաղուց ի վեր կուիներ մղած են և իրենց ետև ձգած ունին բազմաթիւ հին ու մին մաշած գաղա-

փարներ և անօգուտ ձեւականութիւնք կ'ըսէ Սօլթըը, ամէն ջան ու ճիգ թափած են տրամաբանութիւնն կրօնի հետ համաձայնեցնելու դիտմամբ և աղատութիւնն կրօնական հաւատալեաց հետ։ Սակայն իրենց ձեռնարկին մէջ այնքան յառաջ գացած չեն, որքան Ethical Societyին կ'ապաստէր։ և բնականաբար պակասութիւններ կը տեսնենք ի նոսա ոչ թէ իրենց ըրածներուն մէջ այլ զանազան կարևոր ջանքերն ընելու մասին ցոյց տուած դժկամակութեան համար։

« Աստուած » բառն որ սովորաբար կը գործածուի սոսկ փոխաբերարար առնուած է գաղափարն բացայայտ ընելու նպատակաւ։

Սոքա կրօնի կրթիչ ու աղնուացուցիչ չրջանակէն իրենք զիրենք դուրս նետելով պարտականութեան մի նոր ու թարմ նշանակութիւն կը ջանան տալ։ « Կը փափաքիմք յանձնել ղմեզ, կըսէ գարձեալ Սօլթըը, բարոյական զարգացման հոսանաց, կուզենք նետուիլ ու լողալ անոր մէջ, որովհետև գիտենք թէ բարի է և փորձառութեամբ կը տեսնենք իւր քաղցրութիւնն։ Այսու ամենայնիւ՝ սա, սովորական իմաստիւ կամ առումով, կրօն չէնչանակեր և իրաւունք չունինք բնաւ կրօն բառի չհաճած ժողովրդականութենէն օգիլ և զայն գործածել մեր ձեռնարկութեան համար ևս։ Եւ ուստի մեր ընկերութիւնն ոչ թէ կրօնական այլ բարոյական անուանած ենք, սակայն այս éthical բառն իւր ընդարձակ առումն ունի, այնպէս որ կրօնականն ևս կը պարունակէ յինքեան։

Հնադարեան հաւատալեաց և ոչ միոյն կը հաւատան՝ որոց մասին գիտնական ապացոյցք կը պակսին։ Զեն ընդունիր այն հրաչքներն՝ որք արձանագրեալ ի Ս. Գիրս, Աստուածաշունչ Մատենից անսխալութիւնն, չար ոգեաց մասին գրուածներն և աղօթից օգտակարութիւնն։ Գանթ անցեալ դարու մէջ և Հըրպըրթ Սփէնսըը ներկայ դարու և թերևս առաջինք եղան պարզօրէն գծելու Դանօրէ և անդանօրէն միջև գտնուած սահմանն։ Մեր ունեցած գիտութիւն կարի լիմն սահմանափակ է, և ինչ որէ անդր քան զփորձառութիւն սոսկ կրնայ գուշակուիլ, կարծուիլ, երևակայիլ և կամ խորհուիլ և այսպիսի թուիք, գուշակութիւնք և խորհուրդք չեն կրնար ճըշտուիլ և գիտական գաղափարաց վերածիլ։ Եւ ուստի Բարոյական ընկերութիւնն, կը սահանջեն անդամակցողք, իւր հիմունքն դրած է ո՛չ հին կրօնից և ոչ Էվոլուցիոնիզմեան (զբիսականոլոգիան) վերայ, այլ

այս ամենէն աւելի խոր և հին հիման մը վրայ. — այն է խղճի ապատաժին վրայ, յաւիտենական օրինաց որք կ'արտայայտեն գինկեալքն մարդ ոյ բարոյական բնութեան մէջ։

Բարոյական փիլիսոփայութիւնն արուեստ մ'է, կըսէ Սոլիըը, բոլորովին տարբեր հանգամանաք. սա վեր կը բռնէ հայելին, տակայն ոչ թէ գործնականն այլ պաղափարականն, յորում կը տեսանեմք և կզգամք մոլութեանց մոլութիւն և առաքինութեանց՝ առաքինութիւն լինելն՝ և որով կը դատեմք դարն և այնու միջոցաւ հուզանք մեր եղրակացութեանն Աբուեհան գիտնական իրականացումն է, իսկ բարոյական փիլիսոփայութիւնն բարոյն։ Յորժամ կը հայիմք մարդոց և կանանց վերայ, որոշակի կը տեսանենք կատարելութեան հատանականութիւնքն որ ի նոսա, և կը խորհինք յաւէտ թէ սոքա ի՞նչ ըլլալու մտադրեալ էին, քան թէ ինչ են։ Պէտք է որ նկատեմք զմեզ և մեր բոլորտիքն չրջապատող ընկերութիւնն իբր մի կերպարանելի նիւթ, յորում բարութեան աստուածային գաղափարք սկսած են կազմ ու կերպարան առանալ, թէև բնաւ կատարեալ ձև առած չեն, այլ ընդհակառակն ընդ միշտ արդիլեալ և փակեալ են, այնպէս որ եթէ վերին զգացումներով դատելու լինիմք թերևս մինչ իսկ տարակուսիմք առանց գոյութեան մասին, այդու հանդերձ հոգւոյ աչօք և եթ կարելի է տեսանել բարութեան զգացմանց կենդանութիւնն ի մարդիկ և հարկ է սոսկ հաւատալ՝ շարժիլ՝ մղել և ձևի դնել մարդկային կեանքն ազնուագոյն ձևերու և ընտիր կերպարաններու մէջ։

Բայց թէ մի հարց կելնէ աստ, որ է. — « Մինչ սոսկ բարոյականութիւն կարելի է որ փրկէ ղմարդիկ։ Ասոր կը պատասխանեն թէ սոսկ բարոյականն չէ այլ կոչուիլ բարոյականութիւն որ ամբողջ կեանքն իրեն մէջ կը ծածկէ առանց թողլու որ ոև է անկիւն մնայ արտաքոյ բարւոյն և ճշմարտին սրբազան իշխանութենէն։ Աչխարհ բարձրագոյն արդարութեան ոգեկոչիչ մը կը կարօտի եւ կը կարծեն թէ իրօք գտած են զայն,

Ն. Ե. ԳԱՍՊԱՐԵԱՆ.

ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

Ա

Դառնալով մեր Պոլոս բարի վարժապետի՝ որ սկիզբ սոսկար մնար այսօրուան բարուց վատթար պայմաններու վրայ, զուարճալի անցք մը պատմեմ՝ որու ականատես և հետաքրքիր վկայ մ'եղայ։ Փոքր ինչ խնդալ հարկ է այն սխալ խորհրդածութիւններէ ետք՝ զոր ներշնչեց մեզ մեր Իզմիրի դարավերջիկ երիտասարդութեան յոռի ընթացքն՝ որ ամեն օր կը հեռանայ ամենէ ուղիղ աւանդութիւններէն։

Մեծահասատ ծերունին ամէն հրահանգներէ զատ՝ զոր կը կատարէր անթերի ճշտութեամբ, իր հոգւոյ փրկութեան համար պարտք համարած էր Սուրբ Գրոց մէջ դեգերիլ ամեն օր—վենետիկ տպուած գրարատ պատկերազարդ մեծ Աստուածաշունչը — թէև զայն հասկնալու համար Հայոց հին գրաւոր լեզուի հարկ եղած հմտութենէ թերանար։ Եթէ Սուրբ Գիրք կարդալը հոգեշահ պարապում մ'է, զայն լաւ չհասկնալով կարդալը՝ իբր համբերութեան գործ՝ աւելի արդիւնական բան մ'է անշուշտ՝ որ նա'և իբր ապաչխարանք կրնայ ծառայել, և որ՝ իբր այդպէս՝ իր վարձքը պէ՛տք է ունենայ բարձրեալի առջև։ Ծերունի բարեպաշտն՝ իր այդ հին և սրբելի պարապման մէջ, օր մը միամիտ խորհուրդ մը կ'ունենայ, որու հաւանական դրդիչն եղած էր իր առօրեայ ընթերցմանց առարկայ եղող Աստուածաշունչ Գրոց երկարութիւնն՝ որ անհատնում կ'երևար իր աչքին։ Նա ուխտ կ'ընէ Աստուծոյ հոգին աւանդել այն օրն՝ որ Սրբազան մատեանը ծայրէ ի ծայր լմնցնէր։ Այս միսթիքական դաչինքի հիմնական պայմանն այն էր՝ որ բարի հաւատացեալն պարտաւոր սկիզբ ըլլար օրը մէկ գլուխ կարդալ պաշտելի դրքէն։ Այս համաձայնութեան մէջ նոյն իսկ իր նիւթական չահը գտնել կարծած էր միամիտ քրիստոնեան՝ որ երկնային յաւիտենական կեանքը վայելելու իր բոլոր հոգեկան ըղձանաց հակառակ, այս անցաւոր կենցաղի մասին կը ցուցնէր այն բուռն յարումը՝ որ յատուկ է մանաւորապէս ալեւոր հասակի։ Իր սխալ հաշիւով եթէ ոչ անվերջ՝ գէթ Մովսէսաղայի չափ երկար տարիներ ապրելու նախանձելի պարագայի մէջ սկսի գտնուէր ինք։ Ուխտը դրաւ միսթիքական հաւատացեալը և հաստատապէս համոզուեցաւ թէ վերէն երկինք՝ որու հետ առօրեայ առնչութեան մէջ էր, իր հաւանութիւնը տուած ըլլայ այս կարգադրութեան։ Հետևաբար իր կանոնաւոր ընթերցումն սկսաւ ամենայն արարչագործութենէն, «Ի սկզբան արար Աստուած զերկին և զերկիր . . . . »

Այլ սակայն ժամանակի անընդհատ հոլովման ու յաջորդութեան՝ որ օրին մէկը յեղակարծ ծերութեան եզերը կը հասցընէ զմարդ, ո՛ր երկար, ո՛ր անհատնում գիրքը կրնայ դիմանալ Ամիսներ, տարիներ կ՛անցնին, Բարի քրիստոնեան հաւատարմօրէն մէկ գլուխ պարտաւորական ընթերցուը կը կատարէր ամէն Աստուծու օրը։ Մովսէսի հինգ գիրքերը կը կարդայ. գիրք Ննդոց, գիրք Ելից, գիրք Ղեւտականաց, գիրք Թուոց, գիրք Երկրորդ Օրինաց. անկէ ետք հետզհետէ իր կանոնաւոր ընթերցուժի նիւթ կ՛ըլլան գիրք Յեսուայ Որդւոյ Նաւեայ, գիրք Դատաւորաց, գիրք Առաջներորդ՝ Երկրորդ՝ Երրորդ՝ Չորրորդ Թագաւորաց, Առաջներորդ՝ Երկրորդ Մնացորդաց՝ եւ եւ եւ։ Անկէ ետք հետզհետէ աչքէ կ՛անցունէ գիրք Ցոբայ, գիրք Սաղմոսաց, գիրք Առակաց, գիրք Ժողովողի, գիրք Խնաստութեան, գիրք Եկղեսիաստիկեայ . . . ։

Միջադէպ մ՛երբ այդպէս իր հոգեկան ուխտի կատարման կը պարապէր խղճահար ճշտութեամբ։ Բարի վարժապետն օրին մէկն ականջը կը դնէ առօրեայ սուրբ պարտքը վճարելու, այլ ի զո՛ւր. աչքերն իրենց ծառայութիւնը կը զլանան, այսինքն չեն զօրեր տեսնելու։ Հապա ի՞նչպէս սիրտ չարունակէր և գլուխ հանէր միսթիքական դաշինքը՝ որ սեւեռուն գաղափարի տիրապետութիւն առացած էր իր վեճահաւատ մտքի մէջ։ Այսպիսի աղէտի մը չհաւատար նա։ Անկարելի էր որ ամենարարին Աստուած, այսինքն իր միսթիքամիտ հանճարումով իր երկնային դաշնակիցն այս ձիւնը թերէր գլուխը։ ի՞նչ, կէս ճամբա՞ն պիտի ձգէր ուրեմն պայմանեալ ընթերցումը, կամ ինչ որ նոյնն է՝ իր հոգւոյ փրկութեան աւագ գործը։ Սուրբ Գիրքը չաւարտած իր հոգին պիտի առնէ՞ր օր մը, կարելի բա՞ն էր այս։ Ո՛չ, այս փորձանքը չէր կրնար բարի Աբրահամին՝ իր բարեգութ հօր կողմէ եկած ըլլալ. չար սատանայի մէկ խաղն էր այն՝ գինք յաւիտենական երանութենէ զրկելու համար։ Այլ միթէ անոր չարաչուք իշխանութիւնը միանգամ ընդ միշտ փճացած՝ չէ՞ղացած չէ՞ր Փրիստոսի սուրբ կրօնի ընորհիւ. միթէ իր Տէրը՝ իր Աստուածը չէ՞ր կարող ընորհել իր աչքի լոյսը և չարութեան սեւ հեղինակը ձգել ամօթահար։ Այս հաստատ յուսով պահ մ՛առ նոր փորձ մը կ՛ընէ։ Նո՛ր անյաջողութիւն։ Երրորդ և միշտ ապարդիւն փորձ։ Գայթակղութիւն և սեւ յուսահատութիւն կը պաշարեն հինաւուրց վարժապետի սիրտն ու հոգին, քանզի իր աչաց կուրութիւնն ա՛լ աներկբայելի իրողութիւն մը կը դառնար . . . . երբ յանկարծ կը դիտէ, կը դիտէ բերկրապատար — ի՛նչ երջանիկ յայտնութիւն — թէ՝ ականջին ապակիներէն մէկն իր չրջանակէ ելած՝ կը խաղար իրեն այն խաղն՝ որ պահ մը յուսահատութեան մահացու մեզքի մէջ խօթած էր դինք։ Փառք կուտայ Աստուծոյ՝ անոր յաւուկ թողութիւնը խնդրելով իր սատանած հաւատքի՝ իր գայթակղած մտքի համար։ Նոր ոգեւորութեամբ՝ եթէ ո՛չ աւելի զօրաւոր հաւատքով՝ կը վերսկսի բարեպաշտ ընթերցումը։ Աստուածեղէն զրոց կէսն հասած ու

անցած էր արդէն։ Մէկ մէկ կը լմնան հինգ մեծ և տասնեակու պիտի մարդարէութիւնները, ինչ որ Հին Կտակարանի վերջը ըսել է։ Այն անհատնում կարծած հանգը արդէն իսկ ըսուած էր մեծ մասամբ։ Իր ուխտի հաւատարիմ հին բարի վարժապետը Նոր Կտակարանը ձեռք կ'առնէ անվարան. Աւետարան ըստ Մատթէոսի, Աւետարան ըստ Մարկոսի, ըստ Ղուկասու, ըստ Յովհաննու։ Ասոնք ամենը հետզհետէ կ'սպառին պայմանեալ ընթերցուածեամբ։ Դործք Առաքելոց, որու ընդարձակ պարունակութիւնը յոյս մը մեծ տպաւէն ձգել անուշ, սակայն այն ևս օրին մէկը կ'սպառի։ Սուրբ Դրոց վերջերը կը մօտենար, և սակայն հինաւուրց հէք վարժապետն անվերջանալի կարծած էր զայն, այդ մեծահասոր մատեանի ղեւխանները ծովու աւազի և երկնքի աստղերու չափ» անթիւ և անհատնում երևցած էին իրեն։ Պօղոս բարի վարժապետի մտքին մէջ գիշերը կ'սկսի իր դրած դաչինքի համար՝ որ այլևս անխորհուրդ և զգահավիժ կերևար իրեն. պէտք էր աւելի վերջը կընքել այդ ուխտը. տակաւին ժամանակ կար առեր։ Կը չարունակէ սակայն, կը չարունակէ իր պարտականութեան կանոնաւոր կատարումը։ Թուղթ Պօղոսի Առաքելոյն առ Հռոմայեցիան, Թուղթ առ Կորնթացիսն Առաջներորդ, Թուղթ առ Կորնթացիսն Երկրորդ։ Ամէնքն ալ կը լմննային։ կը չարունակէ։ Թուղթ առ Գաղատացիս, առ Եփեսացիս, առ Փիլիպպեցիս, առ Կողոսացիս, առ Թեսաղոնիկեցիս Առաջներորդ, առ Թեսաղոնիկեցիս Երկրորդ, Թուղթ առ Տիմոթէոս Առաջին, Երկրորդ . . . . Հոս կանգ կ'առնու ան։ Տագնապ, վարանք ու վրդով կը պաշարեն զինք։ Ի՞նչպէս պիտի չարունակէր Ընտրութեան անօթի մեացած քանի մը Թուղթերն՝ որքան իմաստալից և հոգեչահ ըլլային անոնք։ Հեթանոսաց Առաքեալի գրերն եթէ լմնցնէր՝ ի՞նչ կը մնար անդին։ Կաթողիկեայց եօթն Թուղթեր՝ ամենքն ալ կարճ ու նիհար բաներ, և հուսկ ուրեմն Յովհաննու Յայտնութիւնն՝ որ իր համեմատական երկարութեան հակառակ պիտի լմնար անշուշտ, քանի որ այն անհատնում կարծուած Աստուածաշունչը հատած լմնցած էր։ Հապա վե՞րջը։

Ուխտազանցութեան դաղափարն առաջին անգամ կ'ծագի իր պակուցեալ մտքի մէջ։ Պահպանութեան բնազդն իր ձայնը վերջապէս լսելի կ'ընէր զօրաւոր և անդիմադրելի կերպիւ։ Աստուածու քով երթալու, յաւիտենական կեանք վայելելու համար ժամանակ կար միշտ. ի՞նչ հարկ արտորալ և աճապարել։ Կանխադրամը որքան մեծագումար՝ միշտ այնքան լաւ ու չահաւոր։ Մերունի վարժապետն ապրիլ կ'ուզէր տակաւին. զաւակներ ունէր — ստուգիւ բարի՛ զաւակներ — զորս բաւական չէր մեծցուցած, որոնցմէ կարօտը չէր առած և որոնց փառքը չէր տեսած, ամենքն ալ օրինաւոր բնական փափաք էր։ Կեանքի կապուղ մարդկային սկարութեան յաւիտենական պատումին Նա կ'օրօրէ վերջնապէս ետ կենալ իր բարեպաշտիկ ընթերցուէ՝ որ սակայն իր երկար կեանքի ամենամեծ սովորութիւնն էր

և սիրտը ետած էր։ Ո՛հ, երբէ՛ք, երբէ՛ք մեռքը չպիտի առնար պայն արկղի ձիւներու մեջը չդներ իր դէմքին։

Կը դողէ ուրեմն Սրբազան մատեանը՝ գոր այլ ևս չպիտի բանար, և կը դնէ բարձրը՝ դարակի վրայ։ Միթէ դարձեալ չունէ՞ր Աստուծոյ հետ իր հոգին չաւանդել անոր մեռք մինչև որ լմնցնէր պայմանեալ ընթերցումը։ Ո՛րքան ժամանակ որ անհարթ պիտի մնար այն՝ իր հոգին չպիտի պահանջուէր իրմէ կռուած ուխտը հետևանօք, և իրաւունքի ալ դէմ էր որ պահանջուէր Խոբեպալեան՝ որ իր մեռքով խաղ կը խաղար Աստուծոյ, իր այս ծայրայեղ որոշման մէջ յայտնապէս ներշնչուած կ՚երևար Գաբրիէլ Հրեշտակապետի հետ ուրիշ ձևով դպինք դնող և յետոյ վարպետութեամբ իր պայմանը չկատարող մարդու մը փոքր ինչ միամիտ պատմութենէ՝ զոր ամենայն լրջութեամբ պատմած էր ինձ օր մը, և որու մանրամասն պարագաներու կը խոստովանիմ թէ լաւ ուշ չէի դրած։ Որու մտքէն կ՚անցնէր թէ 30 — 35 տարիէ ետք պատիւ պիտի ունենայի պատմել զայն Ա. Մոլոյ ընթերցողներուն։ Այդ առասպելի համեմատ՝ Հրեշտակապետը ճարահատ՝ աւելի վարպետ վրիպած և խաղ մ՚ալ ինք խաղացած էր վարպետորդիին։ Օրին մէկը ծպտեալ պայմանած բանն՝ որու ինչ բանի վրայ կայանալը չեմ յիշեր, կատարել տուած և այն ժամանակ միայն ինքզինք ճանչցնելով հոգին պահանջած և կորզած էր անորմէ։ Այլ բարի վարժապետը՝ իրազեկ՝ յանկարծակիի չպիտի գար բնաւ. նա արհուն պիտի կենար, որ և է պատճառաւ Սուրբ Գիրքը դարակէն վար չպիտի առնէր թող թէ բանալ զայն կարդալու անխորհրդութիւնը դործել։ Այս կերպով իր կենաց չբունակութեան լիուլի ապահովութիւն ունէր հին պարզմիտ քրիստոնեան՝ որ՝ ինչպէս կը տեսնուի, յաւիտենական կեանքը վայելելու մեծ արտօրանք չէր ցուցներ իր ջերմեռանդ հաւատքի հակառակ։

Այլ սակայն կա՞յ աւելի հաւաստի բան մ՚այս անստոյգ աշխարհի մէջ քան մահն՝ որ անպատճառ ամէնուս պիտի հասնի՝ երկրի վրայ մեր ժամանակաւոր երևումի վերջ տալով։ Փիլիսոփայօրէն մտածելով չարիք մը չէ այդ բնական օրէնքը, այլ մարդկային տկարութիւնն իբր այդպէս նկատած է միշտ զայն պահպանական բուռն բնազդի զօրել ներգործութեան տակ։

Պաղոս վարժապետ իր անտանան վստահութեան մէջ ուխտաւն և եօթ տարեկան կը վախճանէր կաթուածի ուժգին կրկնութեամբ մը՝ մինչ Սուրբ Գիրքը դարակին վրայ կը մնար միշտ փոշոտ ու լքուն։ Վեց տարի ամբողջ այդ անողոք ախտի հետ «նշանուած» և անոր չարաղէտ իշխանութեան մատնուած՝ ո՛չ կեանքի սէրը պակսած էր իր ծերունի սրտին մէջ և ոչ ապրելու մասին իր անշարժ վստահութիւնն ամենափոքր տատանում մը կրած։ Այդ վեց տարուան մէջ օր մ՚ինակ Սուրբ Գիրքը մեռքն առած չէր երանելին։ Կեանքի այգաթն յարած իմ հիւանդութեց

դրացիս՝ իր տպրելու այդքան զօրեղ կամէութիւնները պիտ պահէ՞ր արդեօք ի տես այն բարուց խանգար վիճակին որ կ տիրէ այսօր, և որ խորունկ վէտով և ամենաբուռն գծուածքն պիտի համակէր անշուշտ իր բարի քրիստոնեայի սիրտն ու հոգին։ Ո՜հ, կը տարակուսիմ մեծապէս։ Կարծեօք դարակէն վ պիտի իջնէր Սուրբ Գիրքը և անաւարտ մնացած դլուխները թերևս պայմանեալ ժամանակէ առաջ իսկ պիտի կարդացուէի՞ իր աղատ կամքը, որպէս պի Աստուած ժամ յառաջ առնուր իւր երկիւղած հոգին՝ որու վաթսարած մէջալայր մը կայան չէր կրնար ըլլալ այլ ևս։

Պօղոս վարժապետ ծերութեան և անկարողութեան պատճառաւ հրաժարած էր պաշտօնէ առանց հանդստեան թոշակ վայելելու։ Այս մասին ամէն աղաչանք անլսելի եղաւ։ Միակ ընդհն որ ըրին իրեն՝ մաս առ մաս վճարուելն էր թարդեալ հին ամսականներու, քանդի հին ժամանակ իրաւացի և օրինաւոր կ'երևէր, որ աղդին արկղը դատարկ եղած առեն վարժապետին փորն ալ դատարկ մնայ, սպասելով որ ծերութեան մէջ մեռնի անսուազ՝ եթէ նեցուկ կամ ապաւէն մը չունենայ։

Ի՞նչ անիրաւութիւն է այս՝ որ կը տեսնուի կարծենք մեր ազդի մէջ միայն։ Պաշտօնեայ մ'այխատցնել մինչև կենաց վերջալոյսը, և այն ժամանակ թողուլ զինք թշուառութեան և անարգութեան փոսին մէջ։ Ի՞նչ ընէ այդ խեղճն, այդ ապիկարը։ Ո՞ր ազդի՝ ո՞ր ժողովրդի մէջ տեսնուած է այս, իր հին աչխատաւորն անկարող տարիքի մէջ թողուլ անօք և անխնամ։ Եւ ազդին ընդունած օրէնքը կը տրամադրէ՝ պատհովել վարժապետներու՝ խե՛ղճ վարժապետներու պատգան՝ որոնց ներկան իսկ ապահով չէ և ոչ իսկ տղոցմանց ազատ . . . ։

(Շարունակելի) ՍՏԵՓՈՊ ՆՈՒՊԱՐՆԱՆ

ԳԻՇԵՐ

Գաղջ օդին մէջ ամառուան
Ան ուշ բոյրեր կը հեւան,
Երազներու խօլ շուքը ե
Որ ինձ կ'առնէ օրեւան։

Լուսինն հալած մասնակի
Դեպի ծովը կը նակի՝
Տալու աւուր սեւ դէմքին
Իր ժպիտները ասկի։

Ու ժպիտներն բրբշռան՝
Ծովին մանրիկ կաւզերուն
Վերեւ խոնուող նամբոյրներ
Կը ցանցրնեն սարսռուն։

Եզերքն հանդիպ մի քարի
Կամ ինք իր մէջ կը փշրի
Մերթ այեակ մը խօլ, մոլար,
Շեշտովն իր մեղմ, փրփուրքի։

Ու այդ շեշտը վաղասյաց
Կարծես ռնի ողբ մը, յաց,
Վիշտն անորոշ ու տարտամ
Դեռևիր մը յար քառալած։

Այ կը ճալի հովին շռնչ
Հողի մը պես գրեթե մռնչ,
Փսփրսալով հոգեվար՝
Փշրնած ծաղկի մը շշռնչ։

Լռութիւն մը գաղտնալի
Ամեն կողմէ կը ծըլի,
Հեշտ զգուանքներ շնորհելով
Հոգւոյն յուզուած, յոյսով լի։

Լուռ է, լուռ է ամեն ինչ,
Փոխած իր բեւեր նիչ,
Ու լռութեան մէջ այս վեհ
Կայ կեանքի մը երգը ջինչ։

Օգոստոս, 1892

ՄԻՀՐԱՆ ՎԱՐՊԵՏԵԱՆ

ԳՐԱԳԷՏ ՄՕՒ ԻՐ ԼԵԶՈՒՆ

Մեզ եղած հրաւէրին պատասխանելով՝ կ'հարցնենք նախ, գիտէ՞ Պ. Ղուկասեանը թէ, բառեր կան ողբ, տաքիներու ու գաղափարներու շնորհիւ, կը ծնին և՛ կապրին և՛ կը մեռնին։ Բառեր կան ողբ կ'ստեղծուին, կը պարծածուին ու կը հինանան։ Կան բառեր դարձեալ ողբ իրենց տարազը նո՛ր պահելով հանդերձ, կը կորսնցնեն իրենց սկզբնական նշանակութիւնը, և նո՛ր ըմբռնման ու նո՛ր մտքերու ազդեցութեամբ տարբեր առումՙ ու նշանակութիւն կ'ստանան, մինչ որոյ մի քանիներն ալ, տե՛ղ տե՛ղ տըգէտ ու ամրիկ բերաններու մէջ ազաւաղուելով գոյն ու դիմակ կը փոխեն առանց սակայն նշանակութիւնին կորսնցնելու։

Անհն բառ մեռնելու դատապարտուած չէ, ոչ ալ ամեն բառ պլաֆոխման ենթակայ։ Կան՝ ողբ պիտի թափին ու պիտի խնան, բայց կան ալ՝ ողբ պիտի աշուանան։

Գրական մարդը գիտնալու է լեզուի այս շրջումը, ճանչնալու է ուղիղն ու խոտորն, ճշմարիտն ու աղաւաղեալն, և՛ նորն ու հինն, և ըստ ոչնմ խառնակութեանց բոլէն, աղաւաղութեանց տարտարոսէն պահելով ու ազատելով ի լոյս բերելու է գրական հրապարակին վրայ որպէս զի հոն, լեզուն, միութեան գոնէՙ ժամանակաւոր կայան մը գտնէ, կամ նուիրագործեալ խորան մը, ուր մտնելովը՝ հեղինակութեան, հարազատութեան իրաւունք ստանայ, և հետևաբար, տիրապետող հանգամանաց զօրութի՛ւն ըզգենու։

Եթէ գրչագիրը ու մատենագիրը, գիտնական մարդիկ ու հմուտ յօդուածագիրը այս ողջամիտ ուղղութիւնն ու բարենպատակ միջոցը չդործադրէին, եթէ օտարն ու խորթը, խժալուրն ու խոտանը, և եղծն ու անպիտանը, առանց խորունկ քննութեան առանց հասուն ճաշակի և ընտրողութեան ի բաց չընկենուին, ի՛նչ կերպարան պիտի ունենար արդեօք մի՛ր լեզուն, մեր հնօրեայ գրականութիւնն, ու այսօրեայ գրականութիւնը։

Այ՛ այսպէս ըլլալով, անցնինք ձեռք առնուլ քննագատութեան մանկանը, որոյ դիւթիչ ու թովիչ ազդեցութեամբը, կ՛որսամ ոչ թէ միայն ուսմիկ բառեր, Զուգասըզեանի յօդուածներէն, այլ ծրար մը անասանելի խօսքեր, ու հակ մըն ալ անըմբռնելի խորհուրդներ . . . , որոց առջև ա՛ կամայ միտքս կ՛ինայ,

Pour parler de la sorte, es-tu celui qui lie
Et qui délic, as-tu le double esprit d'Elie.
Qu es-tu. Dis-moi ton nom.

Ո՛վ գիտէ, կրնայ ըլլալ որ Նոր եղիա մը ըլլայ մեր մե՛ծ ընդդիմաբանը, որոյ մէջ սակայն, ինչպէս կերեւի, դեռ չէ եղծուած գաւառական յանձնապաստանութեան ընդածին կնիքը, կնի՛ք որով կը ժոխ գրելու « դժբաղդաբար կամ բարեբաղդաբար մենք ազնուական դաս մը չունինք որ ուսմիկ դաս մ՛ալ ունենանք, և մեր գրողներէ ոմանք ««-ը-ով և ու-ի-ներ ալ ը-ով ըլլան որոց պարագլուխը ինքն պիտի ըլլար անշուշտ։ Հետևաբար բնական էր որ այսքան տղայական դիտողութեան մը իբր պատասխան ունենայի հեգնական ժպիտ մը և ոչ աւելի։ »

Ցաւալի չէ՞ որ կրից տագնապէ բռնուած, կարդացած պատմութիւնդ ալ կը մոռնաս . . . ։

Նիքի կուրութեան, մտքի կուրութի՛ւնն ալ կը միանայ։ կարելի՞ բան է որ ժողովուրդ մը չունենայ իր ոտհմիկ և ուսմիկ կողմը։

Բայց գանք ծանօթ խնդրոյն որ դժբաղդաբար մեր ընդիմախօսին հրաւէրին վրայ մեկի տեղ երեքի վերածուեցաւ. որո՞ւ է յանցանքն, երբ Պ. Զուգասըզեանի հետ ունեցած տեսակցութեանս մէջ իր գառնացեալ սիրտը սւելի կարելիը չխոցելու համար, « կարելի է ըսի ուսմկապաշտը դու չըլլաս, ու ես սխալմամբ ուրիշի մը տեղ քու անունդ տուած ըլլամ։» Գէշ էր ըրած գիջողութիւնս, հիմա կը պարտաւորիմ հրապարակաւ հաստատելու գրածս, և ինչպէս ըսի, մեկ թերութեան վրայ, երեք հատ նշանակել։ Եւ ի՞նչպէս։ Ա՛-ի՛ն. բառեր կը գտնեմ, որք հայերէն չեն երեքը։ «Ն-ը-ր-ը-ս, ո-ր-ն-ա-լ-ն, ե-ր-ե-ք-ս, ը-ս-ս (հագած հրեշտակներ) վ-ա-վ-ե-ր, հ-ե-ղ-ա-յ-ս, ի-ն-ա-ն-ա-լ և այլն և այլն։

Երէկ։ Անհասկնալի ու անասանելի խօսքեր։ Կ՛ուզէի ան-րդը հ-ա-յ-ե-լ։ Դաշտին մէջ՝ ան-ր-ո-ւ-ա-ծ չ-ա-լ-ե, խորհո՞ւրդ բանաստեղծութիւն։ Գ-ո-հ-վ-ե-ժ-ա-յ-ր-վ ընդ-ո-ւ-ա-լ։ Բա՛յց ան խօսի թէ որ մը ա-ն-ը-ն-ը-ր-ը-ս ի-ն-ա-ն-ա-ր-ե, Աիւնազան-ին լեզու։ Թո-վ-ե-ց-ի-ս ի-ր-ե-ս-ն-ե-ր-ս հ-ե-ղ-ի-ւ ա-ն-ե-ր-ե-ս-ն-ե-ր-ն դէ, վերջնադարձա՛ն յաղագս՝ Շ-ո-ւ-ր-ջ հ-ո-գ-ի է, չանթեղն զարնուելը կը հասկնամ, բայց ապառաժին կամ լերան վրայ չեմ հասկնար թէ ինչ միջոցով կը հալի։ Ը-ն-ե-յ-ա-ց-ի-ս-ը էրէյեներ, ականջին երերալը իմացեր եմ, բայց երևակայութեանը՝ միայն Պ. Զուգասըզեանէ։ Պ-ա-ր-ա-ն յ-ա-ն, Սիների մեքենայով կրնա՞յ կարուիլ արդեօք, դերձակներուն հարցնելու է։ Ա-հ-ո-ւ-ն լ-ա-ռ-ն-ո-ւ-ն մը էր ա-ր-ե-ւ-ե-լ-ե-ւ-ի ն-ա-ր-ե-ն յ-ո-ւ-ր-ե-ն էր-ա, կը խնդրեմ, ո՞վ կարդնցնե զայն, և ինչպես կը հագուեցնեն զինքը։ Օրի՛ն լ-ա-յ-ե ե-ր-ե-ւ-ե-ւ-ե-ր-ը ֆ-ա-ն ա-ռ-ա-ւ-ո-վ հ-ա-ն-ի-ւ-ո-վ ի-ն-ա-ն-ի-ն ի-ր-ե-ն-ո-ն, կը փորձուիմ հարցնել, բայց ներեցեք ինձ, օդալու չուներ են ատոնք, թէ օդաթռիչ աւիւծներ։ Հ-ա-ս-ա-ւ ղ-ա-ր-ե-ւ-ո-ւ-ր-ե-ւ-ս ֆ-ա-ղ-ա-ւ-ի-ւ-ր-ե-ր-ը ի-ն բ-ա-ն-ի-ն, կարծեմ թէ Հիւնքեարպէկեանեան Տէր Յովհաննէս Հայրը պատկառեր է պ-ա-ր-ե-ւ-ա-ն-ա-ն

բառիդ առջև ու զայն դուրս է ձգեր իր քրանաչան գործէն։ Աւելորդ էր դէպքն ու արդի դէպ ներկայէն դարձուածներ, քիչ մը կամաց թող գային որ չըլլայ թէ մեր առարկուն միտքն գրչին հետ բռնկի։ Ստուգաբանական բառարանի հեղինակը պայծառացնելու, արձակաղօծելու նշանակութիւնը կուտայ բառիդ, արդեօք դո՞ն ալ այս առումով գործածեր ես, և ի՞նչպէս այդքան մեծ դիւտ մը ծածկեր ես մինչև ցայսօր . . . ։ Հապա մոռնա՞նք ցոյց տալ*, մեր երկիրը, ցախաւել՝ կը նշանակէ ցախէ չինուած աւել, որ գոյական բառ է, մինչդեռ հոս եկեր ածական է դարձեր, Ազգաբորգեան բառարանին մէջ, ճիշդ այսօրինակ դէպք մըն ալ մեր իալոցիներէն մեկնուն պատահեր է։ Միամիտ պանդուխտ մը առաջին անգամ երբ ոտքը Պօլիս կը դնէ, լեզուէն մը առջևէն անցած պահուն կը հարցնէ գինքը դիմաւորող ընկերոջը, «սա ի՞նչ է ուստայ Թօրոս», մեր Թօրոսը որ քանի մը տարիներէ ի վեր հոս կը գտնուի, պարզմտութեամբ կը պատասխանէ, «լեպէկի» է եղբայր։—«Չ'ըսե՞ս վարպետ, մեր երկրին սիսեռը Պօլիս եկեր լեպէկի է դարձեր,» այս որ կը լսէ ուստայ Թօրոսը խընդալէն կը մարի, ի՞նչ կ'ըսես ընթերցող, մենք ալ չ'ինդանք պարոն Հայկազեանին յուշատետրակցութեանը վրայ . . . ։ Դնե՞նք դէտ և այլն և այլն։

Երբեմն իմաստական կամ պատասխանական բառեր։ Վէրցու, ծռնել, ոմանք ալ կրսեն յուռել, չեմ յիշեր թէ ուռել ալ ըսող կայ միթէ, ի դէպ է կարծեմ գուշել «Ծագեա Տէր, զողորմութիւնս քո ի վերայ ծռնելոցդ ծառայիդ Տիգրանայ»։ խոյծ, էլէկ-ծ ախոռ, խռնել (ո) ով և ոչ թէ (ո) ով, մինչ առ մեզ խո, հիւանդութիւն կը նշանակէ, է՛հ, իրաւունք չունի՞ Պ. Ազգաբորգեանը մեր երեսն ի վեր գուշելու, «ռամկական բառին մէջ ալ ան կամ ոն կը փնտռո՞ւի մի, եա՞ . . . ։ Լըսէ՛ռեալ, էլըդէկ, տէրէ, տէրէ . . . դարձեալ և այլն և այլն։

Արդ՝ Պ. խմբագիր, ես իմ պարտքս ահա կատարեցի, թերահաւատը կրնայ դիմել 2977—2999—3028 թիւ Սբ. Էջմիածիններու, ստորագրեալ ի Տիգրանէ Ազգաբորգեան։ Հիմա երբ, յօդուածագիր մը, այս պատասխանական կամ ռամկական բառերը անխիղճ կը շռայլէ, չվտարելով ու չստորագծելով, ու կրնայ վաղիւ, առանց ընտրողութեան գործածել նա և փոխ փոխանակ եօթի, ազէ՝ փոխանակ անձրևի, ու այսպէս բաբելոնական խառնակութեան հանդիսարան մը ընծայել մեր լեզուն, այն ատեն չէ՞ս պարտաւորիր այդպիսի յօդուածագիր մը «Ռամկապաշտ» մակդիրով մկրտել . . . ու անցնիլ։

Հեռւաբար ես չեմ սխալեր, ու արձակած սլաքս որ փորձ երկրաչափի մը ձեռքէն Թռած է, ճիշդ ու ճիշդ հասած է իր նպատակին։

Ապաքէն դուք ձեր անկողմնակալութիւնը ցոյց տուիք, ես՝ իմ պարտաւորութիւնս։

Գալով եզրակացութեան, կը Թողում իրեն, իր բոլոր հեգնական ժպիտը, ու ծիծաղները մանկունակ, կը Թողում իրեն իր բոլոր ակնարկութիւնները ու անվայել յարձակումները, ու կըսեմ՝ Գոնէ այս Թող ըլլայ իմ խրատական առաջին ու վերջին պատասխանս . . . ։

1894 Ապրիլ 12

Պօ-ֆը-Քեյ

ԴԱՍՊԱՐ Պ. ՆԵՄՏՅԷ

* Տե՛ս Ա. Մոմուլ, 1 Ապրիլ

ԿԱԹԻ ՎՐԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ*

11· — Մարմնական չարժուձները և յոգնութիւնը· — ոնտու կիներու մարմնական չարժուձները և գիւղագնացութիւնները կաթին չատնալուն կը նպաստեն· ըստ Անգլիացի Բէյֆիէր բժշկին անկողին մնալը կնոջ կաթին կարագը կը չատցնէ· արօտավայրերը պտտող կովերու կաթը եղնոցները մնացող կովերու կաթէն քիչ, բնապանիրէ առատ և կարագէ աղքատ կ'ըլլայ, յոգնած կովերուն կաթը չափով և յատկութեամբ վար կ'ըլլայ։

12· — Մէջավայրէն ապրեցութիւնը· — Եղնոցներու մէջ դէպ ոնած կովերուն կաթը գիւղին մէջ արածող կովերուն կաթէն քիչ կ'ըլլայ, «որովհետև, կ'ըսէ Գուլիէ, կովերը եղնոցներու մէջ բանտարկուած են, փափաքուած կաթը ստանալու համար հարկէ անուղղին բաբեփոխել և առողջապահիկ կանոններու հակել։ Բռնագրաւիկ հանգստութիւնը թէև կաթին կարագը կ'աւելցնէ սակայն մարգագետիններու մէջ թափառող կովերու կաթերը աւելի աղնիւ կ'ըլլան, այն երիվիրներու մէջ ուր առատօրէն կաթի վաճառականութեամբ կ'զբաղին, կովերը մինչև իսկ ձմեռները ազատ ձգելով միայն սառ կապած ատեն կը բանտարկեն։

13· — Զանազան դեղերու ապրեցութիւնը· — Դեղերէ ոմանք կաթը կը չատցնեն և ոմանք ալ կը քիչցնեն· լուֆո-ֆոֆոխ որ ըստ կաթը կը չատցնէ, ըստ Ալպերթ Բօլէնի՝ ԺԱՊՕՐԱՆՏԻՆ ալ նոյն ազդեցութիւնը կընէ, այս դեղին ազդեցիկ նիւթը (բնէ ֆոքին) ընդհակառակն ըստ Տօքթ· Շմուտթի կաթը և մանաւանդ չաքարը կը նուազեցնէ, նոյնպէս յիշեալ բժիշկին փորձերով ըստուգուած է որ Եօխիմ որ բօլոխոմը կաթին քանակը և չաքարը կը քիչցուցնէ և բնապիտային և իւղային նիւթերը կ'աւելցնէ, կան դեղեր ալ որ կաթնատուին տրուելով մանուկին վրայ կ'ազդեն, այսինքն մօրը կաթին մէջ կը գտնուին, այս պատճառաւ նորածիններու թունաւորման զանազան դէպքեր պատահած են, այս դեղերն են կապարի, ձիւնածաղիկի, խաւարծիլի, աքամոնէի· զաւրիկի և ափիոնի բաղադրութիւնները։

---

* Տե՛ս թիւ 9 Մայիս 15։

14. — Ախտաբանական ազդեցութիւններ. — Սրընթաց և յամրընթաց հիւանդութիւնները կաթին վրայ իրական ազդեցութիւն մը ունին. Սրընթաց հիւանդութիւններէն ջերմութիւնը մաղձին գունաւորիչ մասը կաթին կ'անցնէ, ծիծին պալարը թարախը կաթին կը խառնէ. դենդային հիւանդութիւնները կաթը զգալապէս կը նուազեցնեն: Հիւսօն ժանտատենդ ունեցող կովերու կաթերը քննելով հիւանդութեան սկզբնաւորութեան պահուն կաթը ջուրի, կարագի և շաքարի կողմէ աղքատ և բնասպիրի, բնասպիտի ու աղերու կողմէ հարուստ գտած է և հիւանդութեան յառաջացած միջոցին կաթին մէջ թարախ և արիւն տեսած է: Ցամրընթաց հիւանդութիւնները, մասնաւորապէս թոքախտ և ֆֆլիկ կաթին ջուրը կը շատցնեն և կարագը կը քիչցնեն. թոքախտաւոր հիւանդներու և կենդանիներու կաթին միջոցաւ հիւանդութիւնը զայն գործածողին կը փոխանցի, Բէօշ և Թուսէն 1880ին կաթի միջոցաւ թոքախտին ուրիշներու փոխանցիլը հաստատող բազմաթիւ փորձեր հրատարակած են, այս պատճառներով հարկ է միշտ կաթը եռացնելէ վերջը գործածել, մանաւանդ քաղաքներու մէջ որ շատ կովեր թոքախտաւոր են, այծերուն թոքախտ չըլլալը և ասոնց կաթին թոքախտ ունեցողներուն օգտակար ըլլալը փորձերով ստուգած են:

15. — Բարոյական աղեցութիւնները. — Բարոյական տպաւորութիւնները կաթնատուութեան վրայ ամենէն աւելի կ'ազդեն. ինչպէս Տօքթ. Վօկէլ կը նշանակէ, ողնային ղեղձերը (ծիծ) արտասուքի գեղձերուն նման հոգւոյն բոլոր յուզումներուն կը մասնակցին. քաղցր և հաճելի տպաւորութիւնները կաթին արտադրութիւնը կը շատցնեն, այս պատճառաւ է որ երախային միայն հիշէն կամ տեսքէն մայրը ապուելով մասնաւոր եռանդեամբ կը դիեցնէ. այս պարագայն մեր մայրերը կրնան ջնջախօսքերով կ'արտայայտեն, նոյնպէս ստնտուներուն իրենց հայրենիքը դառնալուն ուրախութիւնը կաթերին կը շատցնեն ըստ կարօտը և տաղտուկն ցաւքեցուցեր էին: Այս բարոյական տպաւորութիւնները, կ'ըսէ Լիէժուա, անասուններուն վրայ ալ կազդեն, էգ կենդանիներուն չատերը իրենց ձագուկները չտեսած կաթ չեն տար: Լըվայլան իր ճամբորդութեան յիշատակարանին մէջ մեզ կը պատմէ թէ երբ հորթը մեռնի անոր կաշին ծղոտապատկերի մը վրան քաշելով կովը կը խաբեն, յայտնի է որ կովը օտար ձեռքով կթուելով քիչ կաթ կուտայ, երբեմն այցելու մը ներկայութիւնը կաթին առժամապէս կտրելուն կը

բուէ։ Տխրապէսիկ տպաւորութիւնները կաթին չափը կը նուազեցնեն և յաճախութիւնը կը փոխեն, կը յիշուի թէ մայր մը սաստիկ բարկութենէ մը վերջը ծիծ տուած ըլլալուն համար երեխան ջղաձգութեան ենթակայ ըլլալով մեռած է, ուրիշ կին մը հրդեհի մը տեսարանէն ուժգնապէս վախնալով մինչեւյն կերպով իւր զաւակը կորուսած է։ Տօքթ. Հայն նոր ծննդաբեր կին մը կը յիշէ որ ոստիկանութեան պաշտօնեայի մը սենեակը մտնելը տեսնելով այնչափ սաստիկ կը յուզուի որ անմիջապէս տղան արգանդին մէջ կը մեռնի։

Բարմանթիէ և Տէյէօ չէ նուազ զարմանալի պարագայ մը կը յիշեն թէ կնոջ մը կաթը ամեն մէկ ջլային տագնապէ վերջը հաւկիթի ճերմուկուցի նման կպչուն կ'ըլլար։

Բնախօսական բոլոր գրքերը կնոջ մը յիշատակութիւնը կ'ընեն որ խիստ բարկացած բնութիւն մը ունենալուն, յաջորդաբար տասը զաւակ կորսյս և տասն և մէկ երրորդին կեանքը սպառնալի մը դիեցնել տալով ապահովեցին։ Դիւրայոյզ կիներու համար անախորժելի տպաւորութիւն մը կը բաւէ առժամապէս կաթը դադրեցնել, Սիպելտ ճանչցած է կին մը որ քաղցրի հոտը առնելուն պէս կաթը կը կտրէր։

(Շարունակելի)

ՏՕՔԹ. ԹԱՇՃԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Քանի որ կենդանական բնախօսութիւնը գարգացաւ և հոգեբանական յառաջդիմութեան նպաստեց, Մանկավարժութիւնն ալ իրը արդիւնք բնախօսական և հոգեբանական հետազօտութեանց աւելի ընդարձակեց իր գործունէութեան ասպարէզն և իր խնամոց տակ առաւ ո՛չ միայն անփորձ պատանին, այլ և օրօրոցի մանուկը։

Դարերու ընթացքին մէջ մանկան կենաց նախկին տարիները բաղդին նպաստաւոր կամ աննպաստ ազդեցութեանց ենթակայ էին, սակայն այժմ չնորհիւ Բեստալոցցիի, Ֆրէօպէլի և ա-չակերտաց անոնց վարպետներու մէջ տառապող դժբաղդ արարածներ ինքզինքնին մանկական պարտէզ-ղրախտներու մէջ

կը գտնեն, ուր զուարթութիւնը չոզ ի չոզ կը փայլի այդ անուշահոտ վարդ ներու և չանչանց վրայ, որոնք իրենց ծոցին մէջ պահած ճճիս ցողնիկներն, մեղմ զեփիւռէն տարուբեր, արեւակէան կենատու ճառագայթէ ետև կը փողփողեն։ Մանկական Պարտիզի մէջ արուած կրթութիւնը սաղմն է ապագայ բարձրագոյն կրթութեան, ուստի իր մէջ պիտի բովանդակէ բոլոր այն տարրերը, որոցմէ պիտի ընծիղնեն ապագայ ծանօթութիւնք և գիտութիւնք, այն բոլոր ուսմանց և գիտութեանց սերմերը, զորս ապագային պիտի մշակեն մանկավարժ ուսուցիչներ բարձրագոյն վարժարանաց մէջ։ Ասկէ պարզ կը հասկցուի թէ ինչ պատրաստութիւն պիտի ունենայ Մանկական Պարտիզի մատաղ սանիկները յանձին պարտիզպանուհին։

Պարտիզպանուհին իրր կատարեալ արհեստաւոր, որ գիտէ իր բոյսերը ոռոգել, մաքրել, ցրտէն ու տօթէն պատսպարել և այլն պայմաններն ու միջոցներ, որոնք նպատակ մը կ'ենթադրեն, այսինքն, քաղցրահամ և առողջ պտուղներ արնաբևեռել, Պարտիզպանուհին կրթութեան գործին մէջ նմանապէս պիտի գիտնայ իր վերջին նպատակն և առ այն դիմելու միջոցները։

Ի՞նչ է Մանկական Պարտիզի նպատակը։

Մանկական Պարտիզի նպատակն է զուարթալի եղանակաւ, արդի մանկավարժութեան պահանջմանց համեմատ, ֆիզիքական, բարոյական և մտաւոր կրթութիւն տալ նորատի երկսեռ մանկանց։

Մանուկն իր ծննդեան յաջորդող քանի մը ամսոց մէջ, իր զգայարանքները կատարելու ընդունակութենէն զուրկ, սննդեան ու հանգստի պէտք ունի։ Սակայն հետզհետէ արտաքին ազդարարը կ'ազդէ անոր վրայ և հոգւոյ դռները՝ զգայարանքները կ'սկսին գործել· աչքը աստիճանաբար կրկնուող երևոյթից մէջ կ'սկսի զանազանել գոյն, փայլ, ձև, հեռաւորութիւն և այլն, ականջը ձայնի յատկութիւնները և ժամանակը (յաջորդաբար կրկնուող հարուածոց ընդհատ միջոցներ), չափելիքը՝ ծանրութիւն, կարծրութիւն, փափկութիւն, անկիւններ, ջերմութիւն եւ եւ։ Պարզ է որ, մանուկը դեռևս իր միտքը բացատրելու միջոցը ձեռք չբերած, լեզու չգտած, հոգւոյ միւս դռներէն (զգայարաններէն) իր մտաց մէջ կ'ամբարուին բազմաթիւ մտապատկերներ, կը մթերի ծանօթութեանց առատ պաշար (նմանութեանց և տարբերութեանց միջոցաւ)։ Իրաց

այդ վիճակին մէջ՝ թողո՞ւնք ուրեմն որ ըստ բաղդի մանկան մտաց մէջ մոռացաւակերներ կազմուին, որով տպագայ կրթութեան հիմը բաղդին ենթակայ կըլլայ, թէ նոյն իսկ զգայարանքները գործած օրէն ազդունք անոնց վրայ և մոռացակատարաց նպատակայարմար ուղղութիւն մը տանք։ Արդի մանկավարժութիւնը վերջին ենթադրութեան ի նպաստ կը խօսի և կրթութիւնը կ'ակսի մանկան լեզու ելնելէն առաջ, նոյն իսկ օրօրոցէն։

Բնական է որ Մանկական Պարտէզն իրը կրթական հաստատութիւն չկրնար մօր պաշտօնն առանձնել առաջին երկու տարիներու մէջ և դործը կ'ակսի երկրորդ տարիէն։

Ո՞վ պիտի կրթէ մանուկն և ո՞ւր պիտի կրթուի նա առաջին երկու տարիներուն մէջ։

— Ընտանիքը և միայն ընտանեաց մէջ։

Ընտանիքի մէջ եղբայրներուն, քոյրերուն, հոր և մօր կը վերաբերի մանկան նախնական կրթութիւնը, նամանաւանդ մօրը։

Սակայն ցաւալի է որ մեր արդի մայրերէն շատերը նշանակութիւն չեն տար այդ կրթութեան, առ այդ պատրաստութիւն չունենալնուն համար և եթէ փափաք մ'ալ ունենան իսկ փոքրիկ անյաջողութիւններէ կը յուսահատին։

Ձեզ ակի մը առանին կրթութիւնը առաջին երկու կամ իրեք տարիներու մէջ շատ դիւրին է, ո՛վ մայրեր։ Մի աչքաթող զպրոցական ուսուցչի մը դերը կատարել, մի բռնազատէք ձեր միտքը աւելորդ տեղեկութիւններ մտաբերելու համար, որոնք, հետաքրքրութիւն, զուարճութիւն և սէր պղելով։ Դիտեցէք թէ, ձեր հոգւոյն հատորիկը ձեր ծնկաց վրայ է։ Հետաքրքրութիւն որ շատ բաներ չգիտէ, սորվեցուցէք ուրեմն։ Ձեզ ոչ ոք կը քննադատէ, ոչ ոք հանդիսատես է, ուսկի՞ց կը քաջալերուիք։ Սորվեցուցէք ամեն բան ոչ այնպէս ինչպէս ժամանակին ստացաք դուք, և ո՛չ այն բոլոր մասերով զոր ժամանակը սրբած է ձեր մտքէն, այլ այն միայն ինչ որ որոշ ու պայծառ կը յիշէք, ինչ որ ղետ ու մաքուր մնացած է ձեր մտքին մէջ, նման գետի մը խաղաղաբերան, որոնք ջրոյ բազմութիւնէն յղկուած են և ազատուած կաշտ ու աւելորդ մասերէն։

Խօսելու ժամանակ դիտեցէք ձեր մանկան աչերը, անոնք ձեր յաջողութեան կամ անյաջողութեան հայելիներն են. հոն պիտի տեսնէք հետաքրքրութիւն կամ ձանձրոյթ: Կրթութիւն ըսելով մեծ բան մը չհասկնաք և ո՛չ դաստիարակութիւնը՝ դժուարատար գործ. ո՛չ, մի սոսկաք պատուական մայրեր, աչքատեցէք միայն մանկան աչաց առջև պարզուած առարկաներն ու երևոյթները բացատրել, իսկ այս չատ դիւրին է: Մինչ չունի՞ք պարտէզներ՝ ուր երիվներանգ ծաղկունք կը հղան արեգական ճառագայթից տակ, չ'ունի՞ք կենդանիներ ու զուարճութեան առարկաներ, չէ՞ք տեսներ պայծառ դիշեր մը աստղազարդ երկնից վրայ բիւրաւոր լուսաւորներ և լուսինը, ցերեկը չե՞ն երևիր արև ու ամպեր, չէ՞ք պատահիր բանաւորու, աղքատանոցներու, հիւանդանոցներու, որբանոցներու, եկեղեցեաց ևն, և մինչ այս ամենը բաւական չե՞ն, նորանոր տեղեկութիւններ մի՞ երելու ձեր մանկան մէջ, և մերթ ընդ մերթ աքանչանօք դիտել տալու Անոր զօրութիւնը, որ այս ամենը մեր բարւոյն համար ստեղծած է:

Ընտրեցէք մարմնամարզական խաղեր ու երգեր, խօսեցէք բուսոց, կենդանեաց և հանքոց վրայ, պատմեցէք բարոյական պատումներ և այս ամենը բաւական է ձեր սիրելի զաւկին սիրտը, միտքը և մարմինը կրթելու:

Մայրերու գործը աւելի դիւրացուցած է Ֆրէօպէլ իր «Մայրենի զրոյցներով» (Les causeries de la mère):

Բնութիւնը սքանչելի կարգադրութիւն մը ըրած է մօր դէմքոտ ձեռաց մէջ դնելով մանկան առաջին տարիներու կրթութիւնը, ինչպէս մօր նմանապէս ընտանիքի միւս անդամոց ամենամեծ պատասխանատուութիւնն է, միշտ անձամբ օրինակ հանդիսանալ բարոյական գաղափարաց գործադրութեան, վասն զի դաստիարակաց վարքն ու բարք խոր հետքեր կ'թողուն մանկանց բնաւորութեան վրայ, որոնք կակուղ մոմի մը պէս դիւրաւ կը կաղապարուին:

Նշանաւոր մանկավարժին մէկը դիտած էր և ես իմ անձնական փորձերովս վերահաստ եղայ, որ բազմաթիւ դաստարանաց աշակերտաց Մանկապարտիզի կամ դպրոցաց մէջ իրենց դաստիարակաց վարուց ու բարուց մանրանկարը կը ներկայացնեն, նոյնն է նաև ընտանեաց համար:

(Շարունակելի) Ե. Ա. ՊԱՐՈՊԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՈՂ ԱՂՋԿՈՒՆԻ

Երջանի՛կ չղարչի երկար քօղերուն տակ պզոտ գաղջ ղե–միւռները կ'ուռեցնեն կարապի թևերու պէս, հապա՛ռ այն ա–ռաջին երկար չրջազգեստին համար որ պիրենք կը նմանեցնէ նորապսակ հարսերու, գլուխնին ուղիղ աւելի չափահաս երե–ւելու համար, իրենց վճիտ բիրերուն խորը չես գիտեր ինչ տարտամ մրդոլում մը, ասնի ցնծագին լուսախայտում մը պա–հելով, երևցան հաղորդուող աղջիկները կլրականաւէտ փաղոց–ներուն ժխորին մէջ։

Ոմանք կը խնդան, կը չաղակրատեն, մրցանակարաչխութեան հանդէսէ մը գալու երևոյթը ունին, արբչիւռ, կը ճառագայթեն, ձայներնին կը բարձրացնեն, չեն գիտեր ինչ ընելնին։

Ուրիշները կարծես դեռ կը չարունակեն աղուոր երազ մը սպիտակափայլ մարմաշներուն ծալքերուն մէջ, աչքերնին վար, և յափշտակութիւն մը դեռ կը պահեն իրենց այտերուն դալ–կութեան, իրենց չարժումներուն թուլացումին ու արտևա–նունքներուն կապոյտ ծիրին մէջ, և մտածել կուտան զոհաղու–թեանց անձնատուր պզտիկ, նազելի սրբուհիներուն, այն ըն–րեալներուն որոց կը նախանձէին չուչանները, և որոց հրեշտակ–ները այցի կ'ելնէին։

Ու, տեսնելով անոնց անցնիլն տուներուն ու փակ խանութ–ներուն երկայնքը, խարտեաշ լոյսի ալիքներուն մէջ որք երկըն–քէն կը հոսին, որ իրենց ճառագայթաւէտ սպիտակութեան վը–րայ օսկի ցայտքեր կը նետեն, մարդ ինքզինքը կ'երևակայէ հա–րուի այն հին քաղաքներէն մէկուն մէջ ուր անհամար զանգա–կատուններն թռչուններով լեցուն վանդակներու պէս կ'երգեն ու կրկներգեն, արշալոյսէն մինչև գիշերուան սառերիլը, այս Տօնի օրը, երբ պզտիկ աղջիկները դասերու թափօրէն ետ կը դառնան, ծաներ, ծաներ, հայրենի տունը բերելով, իրենց չրջազ–գեստին մէջ, վայրի տօտակի ու ծաղիկաւէտ պարտէզներու ա–ռատ բուրումը, իրենց վարսերուն մէջ դեռ կրելով այն վարդի թերթիկներէն զոյս ձայնաւոր տղայք լիարուն կը սփռեն Ս. Հաղորդութեան ամպհովանիին տակէն։

Կանքի մէջ առաջին թուականն է այդ որ հաշուի կ'առնուի, որ հոգիի ներմուծումի մը կը բացատրէ հաւատալիքներու ու պարտքերու, որ կ'աւետէ մօտալուտ կերպափոխութիւնները, դանդաղ փիթիումը բոլոր այն հունտերուն զոյս անծանօթ սեր–մացան մը վեհանձնօրէն ձգած է մանկան սրտին և ուղեղին մէջ։

Ու քիչ կիներ կը մոռնան այդ օրը, նոյն իսկ երբ ծայրայե–ղօրէն դառն տառապանքներ, ու յուսախաբութիւններ, կը փրցնեն, ծուէն ծուէն կընեն իրենց հաւատքը, ու անէութեան ծարաւի ըմպատներ կը դարձնեն դիրենք, երբ նոյն իսկ տեն–

դուռ դռյութենէ մը խելայեղ, հոսանքէն տարուած խլեակներ կը դառնան, ու վերջապէս կը սկսին տարակուսիլ ամէն բանի վրայ, ու թեթևանալ, իբր անօդուտ բեռէ մը, այն յիշատակներէն որոնք յանկարծ կ'արթնցնեն զիրենք, լուրջ ու ծանր ձայնի մը պէս, որոնք տակն ու վրայ կընեն իրենց սիրտը ու դառնութեամբ ցաւն կը լեցնեն։

Կը յիշեն իրենց ջերմեռանդ սլացքները, անմեղ ու անհոգ խաղի քննութիւնները, ուր երևակայական մեղքերով ինքզինքնին կ'ամբաստանէին, ու և է յանցանք մը մտացած ըլլալէ տարաւափառ, կը յիշեն երկար սաղմոսները սլաքիկ մատուռներու խորշդայեղ սուսերին մէջ, ու այն օրը երբ կը փորձէին իրենց անգուսէ կոչիկները, անարատ քօղը, ու այն երանաւէտ չրջապտոյտը ուր ամիսուներուն իրենց անբծութիւնն ու գեղարագոյն չնորհը առաջին անգամ հաղորդուած սլաքիկ աղջկան։

Ահա մտամիտով կը սլասեն խոստացեալ երանութեանց, յոգնած, յուզուած, երջանիկ սակայն տեսնելով որ «մեծ օրը» կը մօտենայ. ապա կը կարծեն տեսնել ինքզինքնին, եկեղեցիին խորանին առջև ուրկից լոյսեր կը հոսէին, և ուր երգեհոնները իրենց յաղթական երգերը կը ցանէին, ու իրենք կը քալէին ժամպատենազարդ մոմով մը որուն կը կառչէր իրենց դողդրիկ ձեռքը, ու ծնրադիր, կը մրմնջէին, չա՛տ կամայ, սլաշտամունքի ու յոյսի խանդավառ աղօթքները ժամադիրքին, ու վերջապէս, մինչդեռ իրենց սիրտը սլայթելու չափ կը բաբախէր, խորանին ծածկոյթին վրայ հակած, կընդունէին սպիտակ սուրբ նշխարը, մաքո՛ւր իրենց հոգիին ու իրենց երակին պէս։

Օ՜հ, չնորհքի դործերը որք կը յաջորդէին հաղորդութեան, յաւիտենականութեան աշխոյժերը, անկասկ, անվերջանալի, գերլուսնկին պատած հրաշագեղ մատներու մէջ։ Օ՜հ, կախոզին գերկախառնուածին ծնողքին, մայրիկին մանաւանդ, որ արտասուալիր աչքերով, իր գրկին վրայ կը սեղմէր ձեղ, ետ առնել կարծես ուղերով ձեղ, և առնը զարդարուած, ծաղկած, խնդալիր, ու նուէրները ըղձալի սլէտք էր ցուցնել ասոր, անոր, սլատկերները որք սլաքիկ բարեկամուհիներու մէջ կը փոխանակուին։

Առաջին անգամ հաղորդուող աղջիկը, սլատուոյ տեղն է սեղանին առջև, բաժակները իրարու կը բաղխին, ինչսլես ծընունդի ցնծութեան սարեզարձներուն մէջ, ուր ոչ ոք իր թերութեան վրայ կը մտածէ, ամեն օրուան տաժանելի ու ապերախտ աշխատութեան, «վազը» ներու սրտաճմլիկ անըստուդութեան վրայ։

Ու բոլոր այս անբիծ չրջագեստները, ծիծփուն այս քօղերը, որ սպիտակ րիծեր կը ցանեն մայթին վրայ չարուած սեղաններուն մէջ, աւաններու անտուութեան մէջ, կարծես բանաստեղծութիւնը կը դենն մի՛ իջքին աղաւնիի մը որ մոլորած ըլլար . . .

Թարգմ.

Մանչեսդր, 18 Մարտ 94

Ս. ՇԱՀԱԶԻԶ

ՈՐԲԱՆՈՑԻ ՏԱՐԵԳԱՐՁԸ

Տեղւոյս Որբանոցի տարեդարձին առթիւ, որ նկարագրուածէ թերթիս 1ին թիւին մէջ՝ Գեր. Ս. Աստղնորդին և Պ. Մամուրեանի ըրած տունաբաժանութեանց խիստ համառօտ խմանան՝ ոմանց փափաքին համեմատ, այս անգամ կ'արտաքրենք։

Թերթիս խմբագիրն ըսաւ — « Դիտասէր սրտերէ և շնորհալի չրթերէ ինձ հասած հրաւէրը՝ որ փոքր ինչ ինքնասիրութիւնս կ'գրգռէր, մերժելու չափ անքաղաքավար չլինելու համար, պիտի համարձակիմ՝ քանի մը խօսք արտասանել Պատ. Հոգաւոր - Որբանոցամ ընկերութեան գործին և իր նպատակին վրայ։ Բայց ի՞նչ խօսիմ. արդէն իր անունն ինքնին կ'արտայայտէ իր ողբմասիրական ձեռնարկին ազնուութիւնն, և իր նշանաբանն արդէն ճարտասան ջատագով մ'է։ Միայն թարգման պիտի լինիմ Ազնիւ Հանդիսականներուն՝ կրկնելով ինչ որ ամենքը կ'զգան ու կ'խորհին՝ թէ Հոգ. Որբ. Ընկերութիւնն իր թևին տակ առնելով գաս մ'որբ և անխնամ օրիորդներ և անոնց նիւթական, բարոյական և մտաւորական պիտոյքը հոգալով՝ կ'կատարէ մարդասիրութեան գերընտիր պաշտօն մը։ Անձուկ է իր սահմանն, դի անձուկ են իր միջոցներն, սակայն գեղեցիկ, սրտագրաւ է իր նպատակն, որ անտարակոյս փրկաւէտ ներգործութիւն մը պիտի ունենայ մի շատ անզգայ և անտարբեր սրտերու վրայ՝ յորդորելով մասնակցութեան։ Կաթիլ մը բաւ ժայռեր, օրհնաբեր արտօսր մը պիտի լինի տհմմային աղէտից լեզի ծովուն մէջ իր ողբմասիրութիւնն, սակայն այնպիսի կաթիլներէ առուներ կը դոյանան՝ որ կ'սրբեն կ'սփոփեն օրբ, ընկեցիկ և թշուառ սրտաթներ, սիրոյ, երախտագիտութեան և բարօրութեան կենսատու ժպիտներ բերելով անհայր և անմայր աղեկէզ սրտերու։ Թշուառութեան փշալից արտին մէջ՝ իբրև համեստ, անշուք, այլ հոտաւէտ ծաղիկ պիտի սփռէ ընկերութիւնն իր բարութեան բոյրն այդ երբեմն անխնամ որբուհիներու վրայ՝ որ այնքան սրտաշարժ շէշտերով իրենց վերածնունդն ձեր առջև ներկայեցին, ի շնորհս Նախախնամական պաշտպանութեան մը։ Արդարև եթէ մեր առջև լոկ փղբր ածուխ մը թողուած բոյսերը կան որ ողբմասիրութեան շնորհիւ պիտի ոռոգուին և ծաղկին, աշխարհիս վրայ քանի՛ քանի այդպիսի աղքատութեան ամայի վայրեր կ'գտնուին, զոր մարդասիրական ընկերութիւններ ծաղկաւէտ դաշտերու վերածելու կ'աշխատին, և մինչ չեն յաջողիր իրենց ճգանց հակառակ։ Այս է թերևս պատճառն որ բանահիւսն ըսաւ թէ՝ աշխարհս արտասուաց հովիտ մ'է։ Այդ հովտին խորն՝ աղէտ, կոծ, ողբ, սուգ, որոց ձայնն, վայնասունն ու նշանները մեզ կը հանգին մնռնաւանդ Աբեմնաւոքէն, այդ հովիտը շրջապատող արգասաբեր և ծաղկալից բարձանց վրայ ճոխութիւն, պերճանք, վայելք և ուրախութիւն, սկայ մեծատուններն ու միլիոնատերու տերերն որոց չնծռութեան ազաղակները հասնին երկնից։ դառնագառն ողբերու հետ խառն գլխաւորապէս այն կողմէն կ'լսուին։ Բայց ահա մարդ երջանկութեան եւս կ'վազէ, միայն շատեր թշուառութեան մէջ կ'թաղուին, պատճառ — բնական, կրթական և բնաւորական իրաց կարգին մէջ գտնուիլ հարկ է։ Արդէն մարդ՝ մարդ,

անոք և ողբրմելի կ'ծնի՝ այս բաւական չէ, սկզբնական մեղօք ալ կ'չարչարուի։ Մայրն է իր առաջին խնամատարն։ ատեպ մանկութիւնն, տիտուրթիւնն և արուեստական դաստիարակութիւն մ'իր թշուառութեան կապահանեն . . . ։ Եւ այդ թշուառութեան ախարիւս ճանկերն ատեպ կ'ուղղուին դիմք ծնող ընկերութեան դէմ։ Եւ ընկերութիւնն այդ թշուառութեան իբրև էական կամ լաւ ևս ըսել, առ ժամեայ դարման՝ ողորմասիրական հաստատութիւնները կ'նկատէ, որոց թիւն թէև մեծ է, որոց հայթայթած գումարներն անբաւ են, սակայն աղետից ոլկեանուս մէջ հանդիս թեթև տարափ մ'են։ Ասոնք կ'ծադրին ընկերային խնդիրներ, վրդովմունք և դործադուլ, այլ չդադրիր՝ անօթիներուն պայքարն կուշտերուն դէմ։ Եւ մինչ անօթին իրաւունք ունի կուշտին օժանդակութեան, մինչ ողորմասիրութիւնն պարտաւորութիւն մ'է։ Ահա խնդիր մ'որ ինչպէս առաջ, մինչև իսկ նուիրական հարցեր, վէճի նիւթ եղած է։ Գիտե՞ք, ողորմի՞լ, կամ դերագոյն հաճոյք մը, և սակայն դաս մը մարդիկ որ անտեսած կ'կոչուին կ'դատապարտեն ողորմասիրութիւնն՝ իբրև ծուլութեան և մոլութեան քաջալեր, և կ'պահանջեն որ մարդս կենաց պայքարը մենելով իր բազդը շինէ, կամ եթէ տկար է ետ քաշուի ու մեռնի։ ուրիշ կարգ մը՝ հանրային հաւասարութեան կուսակից՝ կ'երազեն երկրի և ճարտարագիտութեան բոլոր արդեանց հաւասար բաշխումն, իսկ՝ Աւետարանը բացորոշ կ'պատուիրէ ողորմասիրութիւնն՝ իբրև հոդւոյ փրկութեան միջոց, պատուիրելով միանդամայն աղքատութիւնն։ Որ մէկ սուրբին հաւասալ արժան է . . . ըստ իս՝ անոր՝ որ մանկան նախ բերնի ու մարքի հացը կ'տայ և ապա եթէ այդ կրկնակ անուշդն ստանալէ ետև՝ մարդ դարձած մանուկն անսասան, անուշդայ մնայ՝ իր բազդին կ'երաշխաւորէ։ Աւելորդ է երկարաբանել այս մասին։ Մարդկային ընկերութեան՝ անօգուտ, անտուր իրաց համար, դիրար չարդելու համար ծախսած դրամին մի մասն եթէ իր անդամներուն կրթութեան համար ի գործ դրուէր, անհամեմատ կ'երեւնար այն կեղեքիչ տգիտութիւնն որու վրայ՝ ոչ Աւետարանական խրատ ու քարոզ, ոչ դրախտի յոյսն, ոչ երկնային երջանկութիւնն կրնան ղօրել, նամանաւանդ երբ այդ Աւետարանի քարոզներուն մեծագոյն մասն կենաց ամեն դիւրութեանց հետամուտ՝ ճոխ սեղան, փառաւոր զգեստ, հանգիստ տուն չեն անգոներ և Սուրբ Գրքին աւելի անիծեալ մամոնան կ'սիրեն։ Եւրոպական քաղաքակրթութիւնը բերաւ մեզ շատ դիւտեր, մեքենաներ, մինչև իսկ մտագուշակներ, բայց մոլութեան և հետևապէս թշուառութեան ոչ նուազ սերմեր ցանեց մեր պարզ, նահապետական կենաց շրջանին մէջ։ Եթէ եւրոպացի դործաւորն՝ ինչպէս կ'սինդեն, աւելի շատ բան կ'սպառէ այժմ, եթէ աւելի շատ բան կ'վաստկէ քան իր նախորդներն, պէտք չէ մոռնալ որ իր պիտոյքն այնքան աւելցած են, ատեպ մնատի պիտոյք, որ միջոցներն հաւասարապար չեն բարձրացած՝ անհաշտելի շահամրցութեան մը շնորհիւ, և շատ տեղ վարած կեանքն յուսոյ և ոսկիներու մէջ՝ թշուառագոյն է քան էջտէնբունը։ Իսկ սովամահ մնացողներուն թիւն, երբ սով չկայ, մեր արևելեան բարերար և օրհնեալ երկիրներու բնակիչներուն անհաւատալի կ'թուի։

Իրաց այս վիճակին մէջ՝ եթէ ձրի կրթութիւնը, շահուց օրհնաւոր բաշխումն, կատարի հակառակութեան, մրցման, շահագիտութեան, ինքնամոլութեան դադարումն քիչ շատ հիմնական դեղ ու դարման չբերեն թը-

ջուտ ուրարածներու կացուԹեան, կ'ընան միչտ մտանուր և հանրային աղրմնասիրական հիմնարկուԹիւններ, անկեղանոցներ, հիւանդանոցներ իրրև սպեղանի բարոյական և նիւԹական չատ մը աղէտից՝ որ կ'տառապին մարդկուԹիւնն և պիտի ընդ միչտ տառապին և հետզհետէ ծանրանան այդ տառապանք եԹէ մարդկային ընկերուԹեան կարող, այլասէր և գԹառատ տարրներն նոյն ընկերուԹեան բարւոյն համար չփուԹեան օգնուԹեան ձեռք կարկառել անբաղձ եակներու։ Ահա այդ վեհ պաշտօնն կ'կատարեն մեր մէջ իրրև սիրոյ և գԹոյ հրեշտակներ՝ կարդ մը սիկնայք և օրիորդներ, որ Պատ. Հոդ.-Որբահանդ ընկերուԹեան անդամուհիներն են։

Մեր պարտաւորուԹիւնն է՝ մեր վեհափառ ՍուլԹան Համիտ՝ Օգոստափառ Կայսրն՝ որ իրրև աղրմասիրուԹեան և գԹուԹեան արև կ'սփռէ իր ճառագայԹներն տառապելոց վրայ՝ իրրև օրինակ պաշտել և մերովանէ ջանալ որք, աղքատ և ապիկար էակներու սատար լինել։

Ապա Սրբազան Ա.աջնորդը խօսեցաւ, այս խնդատով — Պարտ է ինձ ևս մի բանի խօսք յարել և Պ. Մամուրեանի մարդկային աղէի վրայ նկատած բաւական տխուր ամպերը ջրուել։ Զի ես հակառակը պիտի խօսիմ, քանի որ աչխարհս չէ Թէ արտասուաց հովիտ այլ երջանկուԹեան դաշտ մը կ'նկատեմ՝ դաշտ մ'ուր բնուԹիւնն անԹիւ բարիք կ'սփռէ ի վայել մարդկան։ Ուր որ դարձնենք մեր աչքը կ'տեսնենք բնական և արուեստական չնորհներ զոր մարդ էակն իրրև աստուածատուր պարգևներ կ'ընդունի իրրև մարդկային հնարագիտուԹեան և հանճարի արդիւնք երախտագիտուԹեամբ կ'վայելէ՝ հետևի այն վայրենական դարերէ ուր կեանքը տանջանք էր և մարդս զրեԹէ անբան, մին չէր ուժ այժմ ընտանեկան և ընկերական այլազան առաւելուԹեանց մէջ կ'ցնծայ։ Այդարև՝ կան դեռ ԹշուառուԹիւններ աչխարհիս վրայ, բայց ոչ ձուլա և ոչ վէպտոսի չափ են լայնածաւալ, այլ անհամար բարուԹեանց մնա հաղիւ լճակի մը տարածուԹիւնն ունին, և այդ տառապանքն, որ մի քանի պատճառներէ, ընտանեկան, ընկերական, յաւաջ կուգան օրէ օր պիտի նուազին ի չնորհս կրԹուԹեան և ոգրմասիրական հասպատուԹեանց որ հետզհետէ կ'բազմանան և ապագայ հանրային երջանկուԹեան լաւագոյն օրեր կ'խոստանան։ ՔրիստոնէուԹիւնն մեծ պաշտօն ունի այդ աղքատասիրական հիմնարկուԹեանց մէջ, և ես՝ իմ մասիս՝ և ինձ հետ շատեր, երբ խնդիրն՝ գԹուԹեան վրայ է, պատրաստ եմ մինչև իսկ ղեկտաներս ծախել տանկին որբին և Թշուառին օգնելու համար։ Ուստի՝ ստոյգ չէ՝ ընդհանրապէս, որ կրօնասէրներն ձորհասէր են հետևապէս և անձնասէր ու անտարբեր, վասն զի չեմ ղլացած երբէք իմ կարողուԹեանս չափով նպաստել, և միւս կողմէ չեմ պարծիր, որ Հոգ.-Որբ. ընկերուԹեան հիմն ես դրած եմ, քանի որ ես արդէն կազմուած դրտայ զայն և միայն իմ օժանդակուԹիւնս նուիրելու նուիրական պարտ մը սեպեցի։ Ուստի՝ և բոլոր Հայ հասարակուԹեան պարտաւորուԹիւնն է, պատուոյ խնդիր մ'է ձեռնտու դանուիլ այդ Որբանոցին, որպէս զի օրէ օր բարգաւաճի և անսերտնջ որը մանկանց բարոյական, կրԹական և նիւԹական պիտոյքն հոգացուի։

Վ.

ԼՐԱԲԵՐ

ՖՐԱՆՍԱ. Նոր պաշտօնէութիւն մը կ'ունենայ Պ. Ֆ. Ռէյրիէ կ'հրաժարի և վարչապետ կ'կարգուի Պ. Շ. Տիւբուի՝ որ կ'կազմէ նոր պաշտօնէութիւնն չափաւոր հանրապետական կարգէն։ Հաւանական կ'թուի, որ Պ. Ֆ. Ռէյրիէ՝ Պ. Գարնօի տեղ՝ որու եօթնամեայ պաշտօնը կ'լրանայ 5–6 ամսէն, նախագահութեան կոչուի։ Ազգ. ժողովը Վերակոյսի քաղաքական օրինագիծն՝ որ կ'տրամադրէր մահապարտները բանտի մէջ գլխատել, կ'մերժէ։ Քօնկոյի խնդիրն նոր կերպարան մը կ'ստանայ. Ֆրանսական կառավարութեան հետ Գերմանիա կ'բողոքէ Անգլիոյ և Պէլժիոյ մէջ կնքուած կարգադրութեան դէմ, և թերևս այդ ահմանագլխի վէճն իրաւարար ժողովի մը քննութեան յանձնուի։ ԱՆԳԼԻԱ ևս կ'պատրաստուի ընդհանուր քաղաքականութեան դործին, և ազատական ու միութենական կուսակցութեանց պարագլուխներն երկրին զանազան կողմերը կ'չրջին և ճառեր կ'արտասանեն՝ որպէս զի կուսակիցներ չահին Լորտ Ռոզպէրի՝ թէև Խորհրդարանի մէջ տկար մեծամասնութեան յենած՝ անվհատ կ'շարունակէ իր պաշտօնը, յայտարարելով ի գործ դնել հետզհետէ ազատական կուսակցութեան ծրագիրն, այս է՝ Լորտերուս ժողովին վետօյ իրաւունքը վոխել, ընարական իրաւունքն ընդարձակել, Իրլանտական օրինագիծն վերստին ներկայել, Կալլէսի և Սկոտլոյ պետական եկեղեցիները բաւնալ և անոնց ստացուածքը դրաւելով ժողովրդային օգտին գործածել, բռնափոխաններու թոշակ կապել, որ գործաւոր դասն ալ՝ ապրուստի հոգ ազատ՝ մուտ գտնէ Խորհրդարանի մէջ, աշխատութեան ժամերն կարմել և։ Արդէն այս խնդիրներէն մի քանին վիճաբանութեան տակ են, և Անգլիոյ եկեղեցական դասն գլուխ ունենալով Քէնդրպըրիի և Եորքի եպիսկոպոսները բողոքած են կալլէսի եկեղեցւոյ մասին առաջարկուած օրինագծին դէմ՝ իրրև անիրաւ ձեռնարկ։ Ի ՌՈՒՍԻԱ կայսերական իշքազմը բարձրագոյն պաշտօնէից՝ երկրորդական պաշտօնավարներ կարգելու իրաւունքն կ'ջնջէ՝ նոյն իրաւունքը կայսեր վերապահելով։ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ վարչապետ՝ Տօքտ. Վէքերլէ կ'հրաժարի՝ ակնկալած աջակցութիւնն արքունիքէն չստանալով՝ քաղաքային տնտեսութեան խնդրոյն առթիւ՝ և անոր կ'յաջորդէ Կոմս Խիւն Հէյերվարի, որ մտադիր է բարեփոխաչ ծրագիր մը ներկայել քաղաքային ամուսնութիւնն կամաւոր հրատարակելով։ ԻՏԱԼԻՈՅ վարչապետն Պ. Քրիսբի նոր այժ կ'ստանայ պատերազմական եղմտացոյցի քաղաքականութեամբ և ընդունելութեամբ, այնպէս որ այդ տէրութիւնն կառավարական զանազան ճիւղերուն մէջ խնայութիւններ ընելու տրամադրութեամբ հանդերձ՝ իր ռազմական վիճակն ըստ առաջնոյն անփոփոխ պիտի պահէ։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՍՄՈՒՐՃԵԱՆ

ԼԱ ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

(LA FRANCFORTOISE)

ԾՈՎԱՅԻՆ ԱՄԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՓՐԱՆՔՖՈՐԹ

Դրամագլուխ ֆր. 6,250,000 Պահեստ դր. 1,270,212 ֆր.

Ընկերութիւնս կ'ապահովագրէ չոգենաւով ուղարկելի ամեն տպրանք, ինչպէս և դրամածրար, ևայլն դիւրամատչելի պայմաններով։

Գնոց և այլ ամեն տեղեկութեանց համար կը հրաւիրուին դիմել առ ընդհանուր գործակալն Զմիւռնիոյ և չրջակայից

ՅԱԿՈԲ Գ. ՎԻՄԵԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ ամիջական կերպով կը գործեմ ակռայի ամեն անտառելի ցաւերը։ Ակռաներու փտած մասերը կը լեցնեմ փտութիւնը ինչ վիճակի մէջ որ ալ ըլլայ, ջղերուն անզգայութիւն տալու համար մի քանի անգամ միայն գործածելով։ Լցուած ակռան ապագային ոչ պիտի ցաւի, ո՛չ պիտի մաշի և ո՛չ պիտի խափի։

Այն անձինք որ քանիցս կեղծ ակռաներ շինել տուած են և միշտ դժգոհ մնացած, թող հաճին անգամ մը ինձ դիմել և ես պատրաստ եմ մինչև իսկ ՄԱՇԱԿ ու անգոր լինելու վրայ գետեղել ակռաներու ամբողջ շարերը և կամ անջատ ակռաներ, առանց դիմելու թելերու յօդնեցուցիչ գործածութեան։

Նոր դրութեամբ կը հաստատեմ ակռաներու ամբողջ շարեր անգլիական քաուչուքի վրայ։ Այս դրութեամբ քունքն իր ձայնակը և լեզուն իր ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՎՆ ու ՆՐԲՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ կը պահէն։

Փտած ակռաներու արմատներն անմիջական կերպով և առանց ցաւ պատճառելու կը հանեմ։

Փոխադրոցք կրնան դիմել Պատախանի փողոց, թիւ 120, 8-12 կ. Ա. և 1-7 կ. Ե.

ՏԻԳՐԱՆ ՏԻՐԱՅՈՒԵԱՆ

Վ. ՄԻՏԻ — V. SIDI

Մեծ կազմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով։

Ամենագնահատիր հագմ, Նաւատատերներու և Տումարներու

ԽԻՍՏ ԶԱՓԱԼՄՈՐ-ԳԻՆՆԻ

17, Պոլպոլեաէ խան, Ֆրանկաց Շարշ

ԱՆԿԱՕ–ԻՍԹԸՐՆ

ՓՕ-ՕՒՔՐՄԹԻՃ ՓՕՄՐԱՆԻ, ԼԻՄԻԹԸՏ

Ճշտիկ Թուղ

Պատիւ ունինք ծանուցանել թէ՝ սկսած է և կը շարունակուի

ԱՄԱՌՈՒԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ

Մեծ ու Շքեղ վաճառատանդէսը որ կը բազկանայ

Համալսարանէն, բրդեղէնէ և մետաքսեղէնէ, չիթեղէնէ, զարդարանքի առարկաներէ, մէկ բառով հագստեղէնի վերաբերեալ ամէն տեսակ կտաւեղէնէ և վերջապէս

Նորելուկի

Հարուստ ձիւղ մը

հա հա հա

ՈՐՈՇԵԱԼ ԵՒ ԶԱՓԱԶԱՆՔ ԳԻՆԵՐ

ՎԱՃԱՌՔՈՒԹԻՒՆ

L'UNION

(L'UNION)

ԱՄԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՁՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ՀԻՄՆԱԼ 1828 Ի Ն

Ընդհանուր Դրամագլուխ և Գործադիր Ֆր. 82,000,000

ԻՒՇԱՕՆ ապահովագրական ընկերութիւնս նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի սակագինէն 30էն 50 0/0 զեղչ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմաթիւ յաձախորդներուն և արդյ հասարակութեան թէ պատրաստ է ընդունիլ յատկապահական 20 0/0 զեղչ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'առաձան իրենց սովորական 30 0/0 զեղչը ընելէ յետոյ։

ԺԱՆ Բ. ՊՕՍԿՕՎԻՉ
JEAN P. BOSCOWICH

Ընդհանուր Գործակալ Ջմիւռնիոյ

Պ· ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԳՈՐԾԱՏՈՒՆ

Հայոց Ազգ. Վարժարան, Ընկերության Թաղին, Թիւ 106

Սոյն տեղական գործատունս, որուղղակի վերաբերեալ կուիէ, ձգախեժէ և թէլ լաթէ ամէն տեսակ պէտքերու լաւագոյնը գնելու պատրաստ ունի։ ամէնատեղւոյ որուդի մը իր քմահաճոյքը հատուցած ո և է խնդրանքի մը անմիջական պատրաստութեամբը մեծ դիւրութիւն պիտի գտնէ։ Գաւառներէ ո և է խնդրանք կամ յուշակ ամենայն ճշդութեամբ կը դրկուի։ Մեր ձեռաց արտադրութիւնը ըլլալով՝ ունինք նաև ճամբորդաց մեծ ու փոքր մետուխները, կանանց, գպրոցականաց, փաստաբանաց, գրագրաց, բազմանեաց, ծխամորկրու զանազան պայուսակներ, դրամի և սիկարէթի դրամապանակներ, թղթապանակ, զանազան գօտիներ, կապերտ պայուսակներ, և այլն, և այլն։

Յոյս մեծ ունիմ թէ, Յարգելի Ազգայիս՝ հայ գործատուն մը բացուելուս առթիւ զգացմամբ՝ իրենց պիտանին մեզմէ գոհացնելու պիտի բարեհաճին։

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

ԳԱԲՐԻԷԼ ՓԻՒՐՄԵՃԵԱՆ

Ֆրանկոյ Թաղ, Կլոշմանալեի 7,

Սոյն գործատան մէջ մեծ խնամք և գեղարուեստական յաջողակութեամբ կը շինուին ամէն տեսակ պատկերներ ալ և այլ մեծութեամբ, պատկերաց վերարտադրութիւնք և մեծացնուած կը ծախսուին ամէն տեսակ լուսանկարչութեան վերաբերեալ մեքենաներ և այլ գործիքներ վերջին դրութեամբ կատարելագործուած։

Փափաքողաց մասնաւոր արուեստասիրութեամբ.

ԴԻՒՐԱՄԱՏՋԵԼԻ ԳԻՆԵՐ

ՊՕՂՈՍ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Օսման Ջաթէ խան, վերի յարկ, 37, Բեյօղլուէլլար Պուլէ

Պատիւ ունիմ ծանուցանել Պատ. Ցանմասորդ ներուս և Արգոյ Հասարակութեան թէ կը պատրաստեմ բուն Անգլիական ձեւերով արանց համար ամէն տեսակ ճաշակաւոր հագուստներ։ Լանտոն հրատարակուած «Տհը Ըւէդ-էնտ կաէնէ» դերձակներուս յատուկ պատկերազարդ հանդէսը կ'ստանամ, որով միշտ օրը օրին տեղեակ կը լինիմ Անգլիական նորաձեւութեանն։

Վէրօճ	Քորխիա	Ժէքթ	6
Ժաքէթ	»	»	7
Պրաէճկոթ	»	»	8

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ — ԼԱՆԼԻԿ

ՄԵՆ ՆՊԱՐԱԿԱՏՈՒԹԻՒՆ

Գ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի ամէն տեսակ պարէն, ինչպէս՝ ալիւր, բրինձ, արդար եղ, շաքար, խաղող, ձէթ, մոլքարօնի, ապուրի համար խմորեղէններ, պանիր, պիաքուիներ, անուշեղէններ, գինի, քօնեակ, և այլն, և այլն և ամէն ինչ որոց պետքը ըլլալի է ամէն տան և մանաւանդ ընտանեկան խոհանոցի մէջ։

Խիստ ժամն և ամէն մրցեալ արհամարհող գիներ։

ՀԱՅԿ ԶԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ՎԵՐՄԱՆԵՐՈՒ

Գործ – Խչ, Բիւ– 4, 12 և 14

Կը ծախսուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բարձեր, փետրէներ և ներբնէներ։ Նաև Ցիղային և Եգիպտական ամէն տեսակ բամպակ թէ՛ մաճ և թէ՛ փոքր գանակուելեամբ։

Ազգպատիւ վրայ մեծ Հոգածութեամբ կը պատրաստուին ընդարձակ վերմակներ Տարօնեկան անկողնի Համար։

Գնաւորներէ եկած յանձնարարութիւնք փութով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՈՏՆԱՄԱՆՆԵՐ

Զանազան կաշիներէ, ինչպէս՝ ոչխէ ոչխի, Բէլտիի, Վէտէլ, ըռոդէն, տաքն և ամառուան Համար գուլպաներ կաշիներ։

Բանտամանները դինը պիտի ծրարուի Տպղնդրին ոտքին թուղթի Համաձայն։ Ահա ՆՈՐՈՒԹԻՒՆ մը որմէ օգտուելէ կը խրատանք մեր Պատուական խորդնեղուն և Արդեպ Հաստատակութեան, որպէսզի՝ ատկէ դրամագլուխ՝ 0/0 10-15 ՆՈՒԱՁ պիտի վճարեն։

ԳՆԵՑՈՒՑԱԿ

Թիւ– 40 եւ Ձոյլ 48 — ՄԵԿՈՒԸ 33 Ե

	Թիւը	ԴՐՀ	
Կօշիկ Նաբուխ կրկնանեղրան	»	»	7
Կօշիկ Բիւտ »	»	»	6
Պօթի Նաբուխ և Խորոտ	»	»	3 25
Ընթին ու սուկաւար (մանկտարը) »	»		2 75
Պլոքեզ ու »	»	»	2 75
Նէս պլոքեզ և կէս պօթ	»	»	2 50
Աքարբին	»	»	2 37 1/2
Ընթին Խոշ	»	»	3 75

Մխանդրատը վերի ցուցակին դիներէն 1/4 մէջիա պակաս։

Բանտամանները ի Հարկին 24 ժամէ կը յանձնուին,

Ազնութիւն, դիմացկունութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ ԿԱՆԽԻԿ

Այլ Նոթեր Եկեղեցւոյ Ռէթ Պրան Մօտ, Բիւ– 47

ԱՄԱՍ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԵ

Շատ բարև Ազն. Տիկիններու և Նազելի Օրիորդներու

Եթէ կուզէք ձեր փափուկ մատներու տակ, գնդեցիկ, ձևաւոր, կոկիկ և աղուոր վերջին նորաձևութեանց համաձայն թորշոնի գործիք մ'ունենալ, որ ձեր պարապոյ ժամերուն փոքր ջղոնքերով, դյնդգոյն գնդասեղներով, ծովագոյն կամ վարդագոյն թղթի վրայ, ֆոքըր, ֆըֆըր նորաձևութեամբ, ձեր մատներու նրբին ճարտարութիւնն ցոյց տալով, պարտիք հանել մը առնել իմ չինած ԹՈՐՇՈՆի բարձերէն, զորս վերջին կատարելութեան հասուցած եմ, որու ապացոյցն է՝ Ցրանկաց թագը նշանաւոր վաճառատանց մէջ իմ չինածներուս ի վաճառք դրուիլն, և որու նմանը Իտալիոյ մէջ ոչ ոք կարող է չինել։

Ասկեց զատ՝

Մտադիր եմ 1900ի Բարիզի մէջ բացուելիք տեղերթային ցուցահանդեսին հատ մը գրկել ի գնահատութիւն։

Փութացէք ուրեմն ազնիւ Տիրուհիք, իմ չինած իրաքանչիւր բարձերէն մէյմէկ հատ գնելու, որու շահումէ՝ ձեր շնորհիւ՝ միտք ունիմ տուն մը չինել տալ։

ՄԷԿ ԹՈՐՇՈՆի բարձ, 38 հատ ՖԻԶՕ 30 ֆր., 1 ՀԱԼԹՈՐԱԿ, 40 ԳՆԴԱՍԵՂ և ԹՈՒՂԹ միասին՝ 1 Ուրծ. մէջմէտ Միայն ԹՈՐՇՈՆի բարձը 20 դրչ. անցուկ։

Կնքրնաւոր՝

ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ա. Կ. ԱԷՒԼԷՄԵԱՆ, Մարդ ըլլալու միջոցը կամ կեանքի մէջ յաջողելու ճանապարհ։— կնքրնատեղի Յ. Մատթէոսեան Թղթավաճառատունն, Կ. Պոլիս. Գին ընծիր քառասնեկ կազմ 8 դրչ. ոսկեզօծ և փառաւոր լաթակազմ 12 1/2 դրուշ։

ԼԵՒՈՆ ՏՕՂԱՍԵԱՆ կրկցէրեան, Սօնատ թեզմ. ԽՈՐԻՆ Ս. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵ. Տպագր. Գ. Պազտասարեան Կ. Պոլիս։ Գին 5 դրուշ։

Սուրբ Երկիր, Նկարագրութիւն Ս. Երուսաղէմի և սրբազան տեղեաց. ՏՐԴԱՏ Ս. ՎԱՐՍ. ՊԱՒԼԵԱՆ. Տէր և Հրատարակիչ Նշան Կ. Պէրպէրեան Կ. Պոլիս. Գին 15 դրուշ։

Առաջնորդ բնթերցասիրեաց եւ բարգմանութեան. Երկրորդ տարի, միջին ընթացք. Աշխատասիրեց ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. Տպ. պր. Նշան Կ. Պէրպէրեան, Կ. Պոլիս. 1894. Գին. 2 դրչ.

Հաճատօտ գրացուցակ. Պ. Պաչինց գրատան. Ֆիճանճըլըր Սօքաղը թիւ 20 Կ. Պոլիս. 1894։

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ

Օրինապես երաշխաւորեալ Բարձր Կառավարութենէ ի ՀԱՄՊՈՒՐ

500,000

Մարք կամ

ԴՐԱՆՔ 625,000

Լքրև մեծագոյն բաժին պիտի ընծայուի ամենէ երջանիկ չահողինը նոր մեծ վիճակահանութենէ դրամագլխոց, Համպուրկի Կառավարութենէ արշաւեալ։

Խաղց ու և է պարագայի մէջ

1	Պարգև, մարք		300 000
1	Բաժին, Մարք		200 000
1	»	»	100 000
2	»	»	75 000
1	»	»	70 000
1	»	»	65 000
1	»	»	60,000
1	»	»	55 000
2	»	»	50 000
1	»	»	40 000
5	»	»	20 000
3	»	»	15 000
26	»	»	10,000
56	»	»	5,000
106	»	»	3 000
253	»	»	2 000
6	»	»	1,500
756	»	»	1 000
1237	»	»	500
33970	»	»	148

18901 Բաժին մարք 300, 200, 150, 127, 103, 91, 67, 40, 20

Դրամագլխոց ամենէ կարևոր վիճակահանութիւնն պուրկի բարձր Կառավարութենէ արտօնեալ և Պետութ ամբողջ կալուածոք երաշխաւորեալ կը պարունակէ 1 տոմսակ, որոց 55,400 ապահովապէս պիտի շահին, այս հակահատուածք մէջ դրամագլուխն է գրեթէ

13,000,000

ՖՐԱՆՔ ՈՍԿի

Այս դրամական վիճակահանութեան նպատակը գաղութին այնպէս կազմուած է որ ստորև նշանակ ամեն 55400 գիներն ապահովապէս պիտի որոշուին ընդհանուր դասակարգի մէջ։

Առաջին դասակարգի գլխաւոր բաժինն է 50,000 մ երկրորդ կարգինը 55,000 մարք, որ երրորդին կ'բարձր 60,000 մարքի, չորրորդին 65,000 մարք, հինգերորդին 70 մարք, վեցերորդին 75,000 մարք, և ութերորդին 500 քայց ոևէ պարագայի մէջ 300,000, 200,000 մարք կ

Ստորև յիշուած ապահովական տոմսերը յորդանք հրաւիրեմ զանց դրուիլ մանանկելի այս վճռագումար նախահատուածքեան։

Այն անձինք որ կր փափաքին գրուիլ կը խնդրուին իրենց ընտրած տոմսակներուն գումարները յղեն Փրան Դրամատան դրամատոմսերով, կամ նշանագրական և դրամատան, կամ աւելի դիւրին պիտի յղին յղ տան միջազգային բդրատարական հրամանագր Ֆրանսական թղթատան թուղթ,

Առաջին կարգի վիճակահանութեան գինն է		
1 տոմսակ ամբողջ նախնական	Ֆր.	7,50
1 կիսատոմսակ նախնական	»	3,75
1 քառորդ տոմսակ նախնական	»	1,90

Չհաւնելով կարգելու տոմսակաց գինն ինչպես նա մեծ գիներու բաշխումն և վիճակահանութեան թուա ներն, վերջապէս ամեն մանր տեղեկութիւններուն կարդ գանել պաշտօնական յայտագրին մէջ։

Այնդ պիտի ընդունի նախնական տոմսակ Պետական դրոշմով ինչպես նաև վիճակահանութ պաշտօնական յայտագիրը, որու մէջ կ'երևի ամե րևոր մանրամասնութիւնք։ Վիճակահանութենէ անմի նետ ամեն շահակից պիտի ընդունի քաշուած պարգև պաշտօնական ցուցակը Պետական դրոշմով։ Բաժին յայտագրին համաձայն շուտով պիտի վճարուին տուրքան երաշխաւորութեամբ, գիները վճարել Արբայական մարքով։ Ամեն հաւանականութեան համ եթէ երբէք վիճակահանութեան յայտագրին շա մէ անյայտմար թուի պատրաստ ենք վիճակահանութ ամէ անյայտմար դասուած տոմսակներն ետ առնուլ դասուած գումարը հասուցանել։ փափաքողին կարգ յանխաբ յղել վիճակահանութեան պաշտօնական տոմսիկն ձրիապէս ի տեղեկութիւն և՝ազատչինք որ գրո փափաքողները շահին կարելի եղածին չափ շուտով մեզ իրենց հրամաններն քայց ոևէ պարագայի մէջ նախ

13 Յունիս 1894 Ն. Տ.

ՎԱԼԱՆԴԷՆ ԵՒ ԸՆԿԵ

Դրամատուն ՀԱՄՊՈՒՐԿ

Ընդհանուր Գործակատարներ, Գերմանիա

Hon. Rédaction